

5747  
C

Կ. ՄԻՏՍԱԼ

# ԳՈՒՍԱՆԵՐԳԵՐ

ՅՈՎԷ. ԱԻԱԳԵԱՆԻ Յառաջարանով

ՈՍԿԵԽՈՏԸ, ԱՐԵՒԱՄԱՐՏԸ,  
ՎՐԷՆ ՈՒ ՋԻՆ, ՀՐԵՂԷՆ ՋԻՆ, ՄՇԵՐ



Հայ Աւանդավէպեր երկիւղածօրէն հաւաքուած

եւ

Գուսանօրէն Պատմերգուած

Ա.



«ԿՈՉՆԱԿ»ի Հրատարակչական Ընկերութիւն  
ՆԻԻ ԵՈՐՔ

1919

891-99  
0-4





*G. W. Reynolds*

11-11-0


~~Музейно-просветително дружество  
"Св. Кирил"  
БИБЛИОТЕКА  
Музейно-просветително дружество~~

4872

891-99

U-54

891,981



Կ. ՍԻՏԱԼ

# ԳՈՒՄԱՆԵՐԳԵՐ

ՅՈՎՀ. ԱԻԱԳԵԱՆԻ Յառաջարանով

ՈՍԿԵՒՈՏԸ, ԱՐԵՒԱՄԱՐՏԸ,  
ՎՐԷՆ ՈՒ ԶԻՆ, ՀՐԵՂԷՆ ԶԻՆ, ՄՇԵՐ



Հայ Աւանդավէպեր երկիւղածօրէն հաւաքուած  
եւ

Գուսանօրէն Պատմերգուած

Ա.



«ԿՈՉՆԱԿ»ի Հրատարակչական Ընկերութիւն  
ՆԻԻ ԵՈՐԲ  
1919

Handwritten notes on the left margin: 'A 67303' and '2198'.

~~US 1940 T F  
1952 P~~

23902

Զ 0 Ն

Անգիր Դպրութեան՝

Անգին Գոհարներու Գանձարան

Հայ Ժողովուրդին

Կը նուիրեմ

Իբրև փոխ առած այս Ասանդավէպերս





## Ն Ա Խ Ա Բ Ա Ն

### ԱՒԱՆԴԱՎԷՊԵՐԸ ՈՐՊԷՍ ՆԵՐՇՆՉԱՐԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ

Հայ պառաւ կինը, զիւղացի հովին ու հովուուհին, սաղերգող աշուղն ու ստուերի պէս շիկնոտ, աննշմար թափառաշրջիկը, հայկական չքնաղ աւանդավէպեր, թանկագին գանձեր ունին պահած իրենց սրտերուն խորը: Գուրգուրուած, փայլախալած այդ աւանդավէպերը դուն ուրեք կը թառին անոնց շրթներուն վրայ, եւ ունկնդիրներ՝ ափ ի բերան՝ իրենց հոգիներուն մէջ կը քամեն անոնցմէ ծորող անօրինակ, աննկարագրելի հեշտանքը: Հայ դրականութեան, հայ իմացականութեան, հայ հանճարին առոյգ, կենսալոյսը ծագիկներն են անոնք, որ հայ ցեղի բազմաբնորուն անդաստանին վրայ, դեռ մինչեւ այսօր ալ, կը պարզեն իրենց վայրի բայց յորդ գեղեցկութիւնը: Յեղին մտածումը, ցեղին յատկանիշը, ցեղին կորովն է որ կը յորդի անոնց մէջէն: Հոն տիրող արուեստը բարդութիւններ չունի առ հասարակ. պարզ է այն նման ժողովուրդի սրտին՝ ուրկէ մարմին առաւ ինքը, եւ որմէ սիրուած մնաց մինչեւ վերջն ալ:

Հայ ցեղը՝ ուրիշ շատ մը ցեղերէ աւելի՝ տողորուած է աւանդապահ ոգիով: Անոր կրած բազմադարեան տառապանքներն իսկ չեն կրցած իր մէջէն արմատախիլ ընել այդ ոգիին տիրապետութիւնը, եւ կամ որոշ չափով նուազեցրնել անոր ազդեցութիւնը: Ամեն անգամ որ իր ազգային զգացումներու ջլատման, քայքայման սպառնալիքն զգացեր է Հայը, նստուեր է իր աւանդութիւններուն դիրկը, եւ հոն կազդոյր ու կորով վերագտած՝ պլլուած է իր պատմական անցեալին, սնուցանելով միանգամայն անմեռ սէր դէպի իր նուիրական հայրենիքն ու անոր խնկելի յիշատակարանները:

Հայը հայկական աւանդավէպերուն մէջ կը գտնէ իր

իսկ ցեղին կեանքը: Սէր, ատելութիւն, նախանձ, քէն, վրէժխնդրութիւն, վիշտ, արութիւն, անսեթեւեթ կենցաղ, եւն. եւն. ներկայ են այդ աւանդավէպերուն մէջ առ հասարակ. ու ցցեալ յատկանիչը՝ դրական ըլլայ թէ ժխտական՝ անկեղծութեան, անննդութեան դրոշմը կը կրէ ընդհանրապէս: Ու ասիկա առաքինութիւն մըն է ինքնին՝ որ արհամարհելի չէ անտարակոյս:

Աւանդավէպերը՝ որ անդիր դպրութեան շրջանին ծընունդ առնելով՝ եկած մինչեւ մեր օրերը հասած են բերնէ բերան, ի յայտ կը բերեն որոշ գրականութիւն մը՝ որ, ամեն բանէ առաջ, զերծ է ձգտումէ, մասնաւոր նպատակ հետապնդելէ: Այնտեղ սլարզուած ճամարտութիւնները՝ անողոք ըլլալու աստիճան՝ քողազերծ են ու մերկ բացարձակապէս:

Ժողովուրդի մը գրական ստեղծագործութեան ճամբարտ չափանիչը կը կաղմեն բուն իսկ այդ ժողովուրդին՝ անդիր դպրութեան շրջանէն մնացած երգերը, առակները, աւանդավէպերը եւն.: Բնականաբար ամեն ժողովուրդ ալ կ'ազդուի իր դրացի ցեղերէն՝ նոյն իսկ գրական ստեղծագործութիւններու մէջ, բայց այդ ազդեցութիւնը սահմանափակ է վերին աստիճանի. ու դիտուած ալ է որ նոյն դիւցազնավէպը ունեցող դրացի զանազան ցեղերէն իւրաքանչիւրը իր յատկանիչը դրոշմած է անոր վրայ, ու ըստ այնմ պահպանած է զայն սերունդէ սերունդ:

Եթէ օր մը կարենանք ունենալ հայկական աւանդավէպերու ամբողջական—կամ գէթ մօտաւորապէս ամբողջական—հաւաքածոն, յայնժամ պիտի կրնանք լրիւ զգալ անոնց իսկական արժէքը ու հասկնալ թէ մենք ալ՝ որպէս ստեղծագործող ազգ՝ ո՛րքան իրաւունք ունինք ինքզինքնիս հըպարտ զգալու:

Երեք դասակարգի պէտք է բաժնել աւանդավէպերով զբաղող մտաւորականները.—

Ա.—Բանահաւաքներ՝ որոնք ուղղակի ժողովուրդին բերնէն եւ նոյն իսկ անոր լեզուովը գրի կ'առնեն կտորները:

Բ.—Ազգագիրներ՝ որոնք դրի առնուած այդ կտորներն ու անոնց զանազան վառիանքները աչքի առաջ ունենալով՝ քննութիւններ կը կատարեն, բազդատութիւններ կ'ընեն եւ

անոնց մէջ ցոլացող ցեղային ու լեզուական զանազան յատկանիշերն երեւան կը հանեն :

Գ. — Բանաստեղծներ՝ որոնք իրենց ներշնչման աղբիւրը կ'ընեն ուղղակի այդ աւանդավէպերը, եւ զանոնք զեղարուեստօրէն գրի առնելով կը հրամցնեն հանրութեան :

Այս երեք դասակարգի մտաւորականներն ալ իրենց արժանիքը ունին անտարակոյս, բայց ստեղծագործական հայեցակէտէն բանաստեղծներն են որ կը զրաւեն առաջին տեղը : Անոնք են որ՝ իրենց երկերով՝ ընթերցողին կ'ընծայեն գեղարուեստական հաճոյք. անոնց երկերուն շնորհիւ է յաճախ որ հանրութիւնը կը տարուի ճանչնալու իր զանձերուն յարգը եւ արժեցնելու զանոնք :

Հայ բանաստեղծն է որ Հայ աւանդավէպերուն մէջ պիտի գտնէ նախնի ժամանակներու կենցաղին բովանդակ սարսուռը. այն է որ անոնց մէջ պիտի գտնէ գերեզմանին մոայլը. այն է որ Վրէն ու Զինի նման ճշմարիտ սիրահարներու գլխուն վերեւ իսկ պիտի տեսնէ ճակատագրին անողոք ձեռքը՝ որ կոշուած է թոյն ու լեղի խառնելու մահլանացուներու երջանկութեան մէջ :

Հայ ազգագիրը Հայ աւանդավէպերուն մէջ ցոլացած պիտի գտնէ Հայաստանի տեսարանները, կլիման, մթնոլորտը : Աւանդավէպը՝ դաւառէ դաւառ ու դարէ դար շրջան ընելով՝ կրնայ փոխուած գտնել իր հերոսներուն կամ հերոսուհիներուն անունները, աշխարհագրական դիրքերը եւն. , բայց անիկա միշտ ալ՝ նոյն ցեղին մէջ՝ անեղծ կը պահէ իր էութիւնը, իր ոգին, իր հարազատ նկարագիրը՝ որոնք չեն խուսափիր ազգագրին աչքէն : Աւանդավէպը միշտ ալ կը պահէ իր հոգին, իր սիրտը, իր արմատը, եթէ իսկ անոր մէջ գործածուող լեզուն, բացատրութիւնները, ու նոյն իսկ երբեմն պատկերները այժմէութեան կնիք կրեն իրենց վրայ :

Բանաստեղծն է սակայն որ պիտի զգայ զանոնք հրդեհող կրակը ու պիտի տարուի անոնց մէջ երփներանդող ծիածանէն. այն է որ անոնց մէջ պիտի գտնէ իր զգացումներուն յորդիլ տուող ուժը, մարդկային անսահման կիրքերու բոլոր այլազանութիւնները, ստեղծագործական այն ողորդ՝ որ անհրաժեշտ է զրիչը կենդանութիւնով օժելու համար : Բա-

նաստեղծն է որ անոնց մէջ պիտի ծծէ միատիրքականութիւնը զանոնք պարուրող Անծանօթին, Աներևոյթին՝ որուն վերացնող հրապոյրը մինչեւ այսօր ալ կը պահէ դեռ իր հաշիշը: Անհունին պակուցումը՝ որմէ կը ջանայ խուսափիլ անհունօրէն աշխարհիկ դարուս երկրակենցաղ դասակարգը՝ վսեմին թովչութիւնն ունի այտեղ, ու հոն զգացումս սարսափը՝ պատկառանքի մօտեցող յարզանք մը, ակնածութիւն մըն է դերագանց: Անոնց առասպելները, հաւատալիքները, աւելորդապատութիւններն իսկ անճատելի ներշնչումներ ունին բանաստեղծին համար, որուն երեւակայութիւնը՝ այն հի՛ն, հին դարերու ժողովուրդներու երեւակայութեան հանդոյն՝ պատրաստ է բռնկելու եւ ծնունդ տալու ստեղծագործութիւններու: Աւանդավէպերու մէջ երեւան եկած մարդկային բոլոր կիրքերը՝ իրենց այլազան երևոյթներով՝ կը դադրին ուսումասիրութեան չոր նիւթ հայթայթելէ բանաստեղծին, եւ կ'ըլլան շարժումով, հողիով առցուն էակներ՝ որ կը խլրտին, կը յուզուին ու կը յուզեն միանգամայն:

Աւանդավէպերը չեն նմանիր ներկայ օրերու վէպերուն՝ ուր յառաջ բերուած անձերը գործէ աւելի խօսքի հերոսներ են յաճախ: Աւանդավէպերու մէջ փափսուքով ըսուած խօսքերն իսկ իրենց յաջորդելիք համագօր, աւելի ճիշդը դերագօր արարքներու նշաններն են յայտարար: Սիրոյ բառ մը, հեք մը, նայուածք մը, ակնարկ մը, ևն. բաւական են յաճախ գերեզարելու ենթական, որմէ յետոյ երկուստեք ցուցադրուած նուիրումը մահն իսկ չի կրնար խորտակել ա'յնքան զօրաւոր է այն: Փափուկ, հազիւ լսելի բառերէ ու դրեթէ աննշմար շարժումներէ ետք յայտնագործուած մըշտընջենական, անճատելի այս նուիրումին մէջն է որ բանաստեղծը կը գտնէ իր ներշնչման ճշմարիտ աղբիւրը: Ընկերային ներկայ ինկած բարքերուն մէջ անկարելի է գտնել հին դարերու սրբութիւնը՝ որով օծուած են աւանդավէպերը: Դասակարգային խտրութիւնը՝ որ ամբողջապէս վերցուած պէտք էր ըլլար ռամկավարական սա դարուն մէջ, դեռ կը պահէ իր գոյութիւնը. մինչ աւանդավէպերու մէջ

այդ ուղղութեամբ փչող շունչը ա՛յնքան մաքուր է ու կենդանարար, որ հաղուազիւտ չէ տեսնել իշխան մը, արքայազուն ազնուական մը՝ զարնուած սարերու արեւակէջ հովուուհիին, եւ փոխադարձաբար: Ու յետոյ, այս պատմութիւններուն մէջ, անհաւատարմութեան արդիւնքը մահ է անխուսափելիօրէն: Մահ է նաեւ բաժինը անոր՝ որ քսութիւն, նենգութիւն կը գործէ, դաւ կը լարէ եւն.: Վըէն ու Զինը կենդանի օրինակն է ասոր:

Բանաստեղծական ճոխ հանքեր են աւանդավէպերը, ու հայ բանաստեղծութիւնը՝ ինքզինք հիւժումէ ամբողջապէս փրկելու համար՝ պարտի դիմել այդ գտուած, մաքրուած հանքերուն: Ասկէ մէկ քանի տարի առաջ, հայ բանաստեղծներէն ոմանք սթափեցան իրապէս, ու տեսնելով իրենց ներշնչումի ակին պղտորութիւնը, ուզեցին վերակոչել հեթանոսական դարերը: Անոնցմէ շատ քիչերուն ջանքերը յաջողութեամբ պսակուեցան սակայն: Շատերունը իրապէս եղաւ զո՛ւր ջանք, անօդո՛ւտ վաստակ: Ու ասիկա անոր համար որ, ո՛րչափ ալ յստակ ըլլայ ներշնչարանը՝ օդուտ մը շունի, եթէ երբեք անոր մերձեցողը անատակ է ներշնչուելու: Հեթանոսական երգերը, եւ կամ դարաւոր աւանդավէպերը վերակենդանացնելու, եւ զանոնք բանաստեղծօրէն գրի առնելու համար հանճարեղ բանաստեղծի մը գրիչն է հարկաւոր: Անճարակ ձեռներ, գրչակներ, ոչ միայն չեն կրնար նոր հրապոյր մը աւելցնել, այլ կտորին գեղեցկութիւնն իսկ կ'եղծանեն: Բանահաւաքը՝ բանաստեղծ չէ վերջապէս, ու ո՛րքան պիտի շահէր հայ դպրութիւնը, եթէ բանահաւաքներ բանաստեղծի հովեր չառնէին, ու մնային իրենց համեստ, բայց եւ օգտակար դերին մէջ:

Մեղի հասնող աւանդավէպերուն մէկ հատն իսկ, իր ամբողջութեանը մէջ, սոսկական հեղինակի մը ծնունդը չէ, կարելի է ըսել: Ամեն բերնի մէջ նոր երանդ մը ստացեր է այն, ամեն երեւակայութիւն նոր հանդերձանքով մը պաճուճած է զայն, ամեն պատմերգող իր լեզուէն, իր ոճէն, իր նկարագրէն բան մը դրոշմած է անոր վրայ, բայց այս բոլոր փոփոխութիւնները կատարուած են անզգալապէս, զանոնք պատմողները առանց մասնաւոր նպատակի, առանց մասնաւոր ձգտումի, նոյն իսկ անգիտակցօրէն, իրենցմէ

մաս մը դրած են անոնց մէջ. ու այս է պատճառը որ անոնք պահած են իրենց առուղութիւնը. բայց այն վայրկեանին, երբ գրչակը՝ բանաստեղծի հովեր առած՝ մասնաւոր ձեռնարկներով, թուղթին կը յանձնէ ու հանրութեան սեփականութիւնը կ'ընէ զանոնք, ա'լ կը դադարին անոնք ուսանալէ եւ կը կորսնցնեն աճելու, նորանոր փոփոխութիւններ կը բերու իրենց ընդունակութիւնը: Այս պարագային իրենք կը կորսնցնեն վայրի ծաղկի իրենց կենսայորդութիւնը, ու կը դառնան ջերմանոցի ծաղիկներ՝ տժղոյն եւ հիւծուելու ենթակայ: Գրականօրէն զանոնք վիպելու յանդիմող ճարտար ձեռք մը պարտի ըլլալ ուրեմն, ճշմարիտ քերթող մը՝ որ հայկական աւանդավէպերու վերակենդանացումովը նոր այդ մը շողացնէ հայ բանաստեղծական աշխարհին վերայ, քիչ մը լոյս ու ջերմութիւն ներարկելով անոր մթամած ու ցրտին խաւերէն ներս: Ծճմարիտ, այլ խօսքով ներշնչեալ քերթողին համար անրնական բան մը չէ հին ոճին զեղեցկութիւնները, յատկանիշները նորին մէջ հոսեցնել եւ նորը վերակենդանացնել հինին անմահական շնչովը:

Ու Սիտալ՝ որ յանդիմած է ինքն անձամբ հաւաքելէ յետոյ զուսաներգել նաեւ մեր աւանդավէպերը, պէտք է ըսել որ, օժտուած է առ այդ պահանջուած ձիրքերով. անոր վիպերգած կտորները, ի մասնաւորի Վրէն ու Զինը, աճեն մասամբ ներկայանալի ու հայ դպրութեան մէջ որոշ տեղ մը գրաւելու արժանի կտորներ են: Այս աւանդավէպերուն գրի առնուելու եղանակը բաւական է ինքնին ապացուցանելու թէ Սիտալ լաւ կերպով ուսումնասիրած է հայ աւանդավէպերու լեզուն, բացատրութիւնները, ոգին եւն.: Իրաւ է որ իր իսկ էութենէն շատ բան դրած է Սիտալ անոնց մէջ, բայց այդ բոլորը կատարուած են այն աստիճան ճարտար եղանակաւ մը՝ որ ոչ միայն վնասած չեն կտորին զեղեցկութեանը, այլ, ընդհակառակը, առաւել եւս փայլ ու շնորհ տուած են անոր: Վարպետ զոհարայարդարի մը դերն է որ Սիտալ կատարած է այնտեղ: Գաւառիկ բառերը, իրենց պարտ ու պատշաճ տեղը դրաւած են անոնց մէջ, ու զայն երգող քերթողը գիտցած է հայ շինականին լաւագոյն նրէրներովը խանդավառել զուսանները:—

Եւ աչագեղ Հայուհիներն՝  
Աւետիկէ յօշերուն մէջ մեղր ու կարագ ու սեր դրած  
Ու համրոյր մ'ալ իրենց փքքուն շրքունքներէն՝  
Այդ քաղցրաշուրքն գուսաններուն կը վազէին :

*Այս աւանդավէպերը իրենց հայացի հանդամանքը պահած են նաև անով որ Սիտալ ուղղակի այդ միջավայրէն վերցուցած է իր շքեղ պատկերները .—*

Մեղրագետի ափերուն քով ո՛չ մէկ բարտի  
Պիտի հասնի անոր մարմնի դալար գեղոյն .  
Ու սրբազան գագաքը մեր Արարատի  
Զունի վայել փառքը անոր հպարտ գլխուն . . . :

Վիզն Անիի աշտարակի մըն է նման ,  
Եւ անոր շուրջ ալեկոծող դրօշակներուն  
Ծփանքն ունին իր մագերը , ու սրբազան  
Ժամու կամարն ձեւն է առեր իր յօնքերուն :


Ու բազուկներն պողպատէն են կարծես շինուեր  
Որմէ՛ն կուրս արար քուրքեր կը դարբնուին .  
Եւ քարայծէն է ան առեր իր սրունքներ  
Որ եղնիկներն հալածելէն յոգնիլ չունին :

*Եւ կամ*

Մենաւոր լնի ափին վրայ փքքուն  
Դալար եղէգի հասակն ունի Զին ,  
Եւ իր քայլերու նագանք մոլորուն ,  
Անգէտ շօթօրն է Սինամ կախաին :

Աչքերն իր դուռերն են մութ անձաին ,  
Ուր անքիւ գանձեր կան հին դարերէն ,  
Ու հոն ներս մտնողն ետ չիգար կրկին :

*Յառաջ բերուած այս կտորներուն մէջ կը շողայ արդէն  
Սիտալի արուեստը , ու ընթերցողներ զիւրաւ կը տեսնեն  
թէ ո՛րքան կենդանի ու պատկերալից է այս բերթողին քա-*



23902

նաստեղծական լեզուն: Բացայայտ է որ սարազային ու պահանջին համաձայն Սխտալ ընդունակ է ուժգին կամ մեղմ պատկերներ զծելու առանց ամենապզտիկ շեղում մ'իսկ ընելու հայրենի միջավայրին ազդեցութիւններէն: Եթէ լեզուին այժմէականութիւնը չըլլար, կարելի էր նոյն իսկ խարուիլ թէ հին գուսան մըն է որ կը քնարերգէ: Ա'յնքան հաւատարմութեամբ պահուած է աւանդավէպի ոգին:

Վրէն ու Զինի հովուերգական մասը կատարեալ գեղեցկութիւն մըն է ինքնին, ու մարդ անպատմելի հաճոյքով մըն է որ կը կարդայ.—

Մաքիներու հօտն է կ'իջնէ բլրակէն,  
Հրանունկի ու Նարգէսի պուրակէն.  
Ու ծիծերներուն մէջ այնքա՛ն կաք է յորդած,  
Ուրկէ անցեր, ներմակ վարդեր են ցանած,  
Հօ՛յ, իմ գպոնքս երկուորեակ,  
Հօ՛յ, հօտըս քուխ ու ներմակ...

Հէքեաթին իրապէս ասպետական ոգին ու առողջարար շունչն են որ կը պտուտքին հետեւեալ սարդ բայց գրաւիչ տողերուն մէջ.—

Ան՛ւշ տղայ, կախա՛րդ տղայ, դուն թէ ասպետ,  
Թէ՛ իմաստուն եւ թէ՛ իշխան ինձ կը քուխ.

Իշխաններուն մէջ թէ իշխան ըլլալ կ'ուզես,  
Մեծ նախարար վարագդատին  
Մարմարակերտ ապարանքը քէ քէ քու ձին:

Քերթողներու, գիտուններու կանառին մէջ,  
Թէ համբառի փառապսակը խլել կուզես,  
Բակուրի նոյս դուռին առջեւ քու ձիդ կեցուր:

Իսկ թէ կուռի, ասպետական խոյանքներու  
Փառքին տենչն է մէջդ կը վառի,  
Դիցագնական մեհուրդակին դղեակն ըրէ՛ քեզ հան-  
գրբուան:



Միտալ այս կտորին մէջ չէ մոռցած դնել նաև ժողովրդական երգերու անուշ, ծաւալուն, դաշն ու երաժշտական շունչը: Արդարև ճշմարիտ քնարերգութեան մը արձագանդը կուտան ժողովրդական սիրերգներու համն ու հոտը բերող իր սա պատուական տողերը.—

Կտրին վրէ՛ն, այգին եկո՛ւր,  
Հաւքերուն պէս, ջուրին պէս.  
Փարչիս գինին ըմպե՛լ եկուր,  
Խոնջ ու ծարաւ ուլին պէս:

Մութը չիջած այգի՛ն եկուր,  
Սոխակներու երգին հետ.  
Անտուն տղա՛յ, ինծի՛ եկուր,  
Նուռ ու վարդի բոյրին հետ:

Վրէն ու Զինի մէջ պարերդ մըն է բանաստեղծեր Միտալ, ա՛յնքան զեղեցիկ, ա՛յնքան իմաստալից ու ա՛յնքան կենսարուղի միանգամայն, որուն կ'արժէ եղանակ մը յարմարցնել ու երգել: Մեր ձայնագրութեան ու այս կարգի երգերու պատշաճելիք եղանակներուն ծանօթ հայ երաժիշտներ կ'արժէ որ նկատի ունենան այս կտորը, ու վայել եղանակաւ մը անմահացնեն զայն ժողովուրդին շրթներուն վըրայ, քանի որ, վստահ եմ թէ, այն պիտի անմահանայ արդէն նոյն այդ ժողովուրդին սրտին մէջ: Ահա՛ այդ պարերգը.—

—Եօթն աշխարհ չափած քեզ կուգամ ո՛վ կոյս,  
Գեղոյդ եւ սէրիդ ես խոնջ ուխտաւոր,  
Քեզ գանձ եմ բերեր, գոհար ու սնդուս,  
Եկո՛ւր, հարս եղիր ինձ, աղջի՛կ աղուոր...  
Ա՛յ, դու Հայ կուսա՛ն,  
Հրեղէն շուշան:

(Բ)

—Չի՞ն ու Մաչինէն եկող մեծատո՛ւն,  
Հոս սէր չեն ծախեր վէպ ու ակունքով .  
Կեռ քուրբղ հանէ՛, եւ քաջի պէս դուն  
Արիւնի նամբէն հպարտ ե՛կ իմ քով . . .

Ա՛յ, հարուստ տղա՛յ,  
Ա՛յ, փափո՛ւկ տղա՛յ :

—Պալա՛տս եմ պարպեր ու քեզի կուգամ  
Ես հզօր արքան եօթը ծովերուն .  
Քեզ փառք եմ բերեր ու քաղեր փարքամ,  
Եկո՛ւր հարս եղի՛ր ինձ, աղջի՛կ սիրուն . . .

Ա՛յ նազան աղջիկ,  
Միամօ՛ր եղնիկ :

—Փառքն ու քաղ քե՛զի, ծովերու արքա՛յ  
Ես մատաղ կըլլամ այն պարզուկ քաջին,  
Որ կեանքն ուրացած անյոյս կռուին գայ,  
Եւ սէրիս տիրէ ու ժովն իր քաղկին . . .

Ա՛յ, սեւ ձիաւո՛ր  
Փարքամ քազաւո՛ր . . .

—Քեզ պաշտող եօթը ասպետներն ինկան՝  
Հզօր քափին տակ սա՛ կարշնեղ քաղկին .  
Ո՛չ գանձ ունիմ ես, ո՛չ բերդ ու մական,  
Աղջի՛կ, քաջ տղուն կ՛ուզե՞ս ըլլալ կին . . .

Սիրտիս քազուհի,  
Ա՛յ, քաջ Հայուհի . . .

—Վահան հետըդ ա՛ն, եւ ձեռքիդ մէջ՝ քո՛ւր,  
Ինձ հետ կռուի՛ ել, ա՛յ ասպետ տղա՛յ .  
Կ՛ուզեմ քաջի պէս ըլլալ անձնատուր,  
Որ սէրըս յաւէտ քու գերիդ մնա՛յ . . .

Ա՛յ, սիրուն տղայ  
Իմ կտրին փեսայ :

Վրէն ու Զինը՝ որ հովուերգութեան, քնարերգութեան ու դիւցազներգութեան խառնուրդ մըն է ինքնին, ա՛յնքան աչքառու արուեստ մը կը պարունակէ իր մէջ, ա՛յնքան կենդանի նկարագրութիւններ ու շքեղ պատկերներ ունի, անոր կառուցուածքը՝ մէկ ծայրէն մինչեւ միւսը՝ այն աստիճան հայացի է եւ ինքնադրոշմ միանգամայն, որ իրապէս պատիւ կը բերէ զայն ստորագրող քերթողին: Սիտալի այս՝ ու անոր յարակից միւս աւանդավէպերը մեծ հաճոյքով կը կարդացուին. ու ես այնպէս կը հաւատամ թէ այս քերթողին արուեստը ճաշակողները բաղձալով պիտի բաղձան որ նմանօրինակ ուրիշ դործեր ալ հրամցնէ իրենց, պայմանաւ սակայն որ միշտ չափածոյ եղանակաւ գրի առնուած ըլլան անոնք. վասն զի, Սիտալի արուեստը, արձակէն աւելի՝ չափածոյ գրուածքներուն մէջ է որ ի յայտ կուգայ. պարագայ մը՝ որ, ըստ իս, թերութիւն մը չէ օժտեալ բանաստեղծներուն համար. ու Սիտալ՝ իրաւ որ՝ օժտեալ բանաստեղծ մըն է, արժանի մեր գուրգուրանքին ու զնահատումին: Սիտալ անոնցմէ է մեր մէջ, որ գիտցան աւանդավէպերն ընտրել իրենց ներշնչարան ու իրապէս ներշնչուիլ անոնցմէ, միանգամայն ներշնչելով այն ընթերցողները՝ որոնք խելք կ'ընեն կարգալու հայ ճշմարիտ արուեստագէտներու երկերը:

ՅՈՎՀ. ԱՒԱԳԵԱՆ





ՈՍԿԵԽՈՏԸ





## Ո Ս Կ Ե Ւ Ո Տ Ը

Եւ արցունքը իր տրտմագեղ այտերն ի վար հոսե-  
լով՝  
Այսպէ՛ս երգեց իր վէպն ինծի այն ծերունին հայ-  
րական,  
Որուն կեանքը հոյակապ՝  
Անմատչելի ժայռերուն,  
Եւ արեւոտ ու հանդարտ զօղան՝ ին գիրկն էր անցած :

— «Օրովն բարի՛ մեր մեծագոր պապերուն,  
Վանատուրին՝ պարգեւներուն պարգեւը—  
Ոսկեխոտը դիցական—  
Մեր սիգապանծ սարերուն,  
Եւ երկնամերձ ժայռերուն մէջ կ'ուռնանար .  
Ու անկէ վեր ո՛չ մէկ ծաղիկ եւ ո՛չ մէկ ծիլ կը բուս-  
նէր :

«Արշալոյսի առջին շողը սրբազան՝  
Անոր ոսկի քերթերուն դէմ կը ժպտէր .  
Առաջին սիւքը հայագեղ գարունին՝  
Անար հասակը կը շոյէր՝ սիրագին .  
Անդրանիկ ցոլքը աստղերու նուագին  
Անոր բացուած բաժակէն ներս կը պսպղար . . .

Այնչա՛փ աղուոր եւ անմատոյց էր անի...  
Ու հո՛ն, ժայռի մը կատա՛ր՝  
Ազատն արծիւն իր բունիկը կը դնէր.  
Հսկելու որ ո՛չ մէկ թռչուն փորձէ թռչիլ անկէ վեր:

«Եւ ցերեկին Ոսկեխոտն  
Իր սարսուռներն ու դիւքանքը տիրական՝  
Արծուին հզօր նայուածքին խոր կը թափէր.  
Եւ թռչունը վեհափառ՝  
Եօթն արեւի տարփանքը իր հոգիին մէջ կ'զգար.  
Այնչա՛փ սուրբ էր Ոսկեխոտը դիցական.  
—Նշանա՛կն էր ա՛ն բարգաւառ հայութեան:

«Եւ գեղեցիկ կտրիւնները մեր երկրին՝  
Ծերպերն ի վեր, եւ վեր անջուր կողմերէն  
Սրտատրոփ, հեւ ի հեւ՝  
Կը մազլէին մաղթանքներով քրքմաշունչ.  
Ու արագոտն այծեամներուն պէս մատղաշ՝  
Ժայռէ ի ժայռ եւ քարէ քար թռչելով,  
Կը փնտռէին ոսկեխոտը դիցական:

«Բայց անոնցմէ փչեքը,  
Անոնք, որ եօթն անգամ եօթը սրբազան  
Ծաղիկներուն նեկտարը՝ ծաղիկներէն կ'ըմպէին.  
Եւ որոնց սիրտ բարի էր եւ աննկուն՝  
Վահագնի սիրտին նման դիցական,  
Այդ գերագոյն ֆաջերն էին, որ միայն  
Կը գտնէին ոսկեխոտը ցօղափայլ...:



«Մէկ մէկ տերեւ անկէ դրած իրենց ծոցերը մա-  
ֆուր,

Աստղկան բարձր բերդէն,  
Զիաքոնուկէն, Գալիլիայէն՝ կը վազէին սարն ի վար,  
Մեր փերուզէ կախարդ ծովին նայուածքներէն գի-  
նովցած.

Դիցանուէր մեր լեռներու տուրֆն էր ան,  
—Ոսկեխոտը դիւքական:

«Այն տուններէն, որոնց լաները կտրին  
Բերք էին ոսկեխոտը սրբազան,  
Բարիքը բիւր քեւերով՝  
Քաղաքները եւ գիւղերը կը հոսէր:  
Ի՛նչ մետաղ ալ անոր օրհնեալ մէկ տերեւին քէ հը-  
պէր,  
Իսկոյն ոսկի՛ կը կտրէր:

«Կը բերէին խոփերը՝  
Երկրին բարի լանջն հերկելէն ա՛լ մաշած,  
Եւ նիզակներն ու սուրերը անպիտան՝  
Զարախնդիր կուրծքերուն դէմ խորտակուած,  
Ու շղթաները բանտի՝  
Բաց բանտերուն պատերն ի վար սպասելէն ժանգո-  
տած,

Եւ տերեւին մէկ հպումովը փափուկ՝  
Բոլոր ասո՛նք կը դառնային զուտ ոսկի:

«Բայց ո՛չ մէկ մարդ գործածական իր կացին,  
Կամ իր նիզակն ու բահը՝  
Անկէ եօթը անգամ ծանր

Ոսկիին հետ փոխել պիտի կամենար.  
—Ոսկիէն քա՛նկ է աշխատանքը հզօր—  
Կը կրկնէին մեր նախնիքը երջանիկ:

«Եւ հրնուանքը՝ գետի պէս,  
Ու բարօր կեանքը՝ ծովին պէս շափիւղայ,  
Մեր գեղեցիկ աշխարհին մէկ հեռուէն միւսը  
Կը հոսէին դարերով.  
Ու մեր ազատ սարերուն եւ ժայռերուն մէջ խրոխտ՝  
Ոսկեխոտը կ'ուռնանա՛ր...:

\* \* \*

Եկաւ օ՛ր մը, երբ մեր երկրի ռազմիկները անըն-  
ւան՝

Նիզակին հետ եւ հետն իրենց սուրերուն՝  
Փշրուեցան դաշտին մէջ եւ կիրներուն մէջ ռազմի.  
Եւ բարբարոս օտարը՝  
Մեր գեղեցիկ Հայաշխարհին տէր դարձաւ:

«Իր աչագեղ բնիկներէն ամայացա՛ւ մեր երկիր.  
Շէն քաղաքներն ու գիւղերն մոխիրներուն տակ կո-  
րան.

Խորաններուն վրայ անտէր՝  
Կանք-եղները՝ առանց ձէթի՝ մէկիկ մէկիկ մարեցան.  
Ու Տիրամայրն՝ անգամ մ'ալ,  
Իր գաւակին խաչելութիւ՛նը լացաւ:

«Ափերուն վրայ հեռակայ՝  
Մեր ահաւոր տառապանքը մենք բացինք՝  
Տակն երկինքի մը օտա՛ր.

Ու Հայրենի երգիֆններուն կարօտով՝  
Մեր մայրերը ֆաղցր աչքերնին փակեցի՛ն...  
—Բնաշխարհէն դու՛րս՝ տառապա՛նքն ու կարօ՛տ,  
Հայաստանին մէջ՝ գերութիւնը անարգ:

«Ու ծանրացող խղճութենէն հեւալով՝  
Շատե՛ր նորէ՛ն դէպի սարերը ելան,  
Գէպի ծերպերը՝ պարտուած մեր երկրին՝  
Ոսկեխոտը ձեռք բերելու տենչանքով...:  
Սարերն՝ անոնց փո՛ւշ ու տատա՛սկ ցոյց տուին՝  
Ու ծերպերը՝ ժահրոտ օձե՛ր ու տանջա՛նք...»

«Եւ արիւնէն իրենց ոտքին վիրաւոր՝  
Քա՛րն ու աւա՛գ որդան—կարմիր ներկելէն՝  
Շա՛տերն իրենց անկար մարմին՝  
Ժայռի մը տա՛կ մահուան ֆունին յանձնեցին՝  
Անպատում ցաւ մը սիրտերնուս մէջ քաղած:

Եւ ուրիշներն օձի խայթէն եւ չար խայթէն մար-  
դերուն՝  
Կուրծքն ու կողերն վիրաւոր՝  
Գէպ գահավէժ մը ֆաշ տուին մարմիններնին բեռին  
պէս,  
Եւ անյատակ անդունդներուն յանձնեցին:

«Ո՛չ ոք կրցած էր ոսկեխոտը գտնել·  
Կորա՛ծ է ան—նշանակը—հին աննուան Հայութեան:

\* \* \*

«Քայց երկնամօտ ժայռերուն ծայրն, ուր երբէ՛ք,  
Գե՛՛ռ օտարին ու ստրուկին ոտքերը չեն բարձրացած,

Ուր տիրական արծիւը՝  
Դեռ անխոռով՝ ազատ բոյնն իր կը դնէ,  
Այնտե՛ղ, կըսեն,  
Ոսկեխոտը կը կայնի յուղարկաւոր մօր մը պէս:

«Եւ գլխահակ՝ ձորերն ի վար կը նայի,  
Դաշտերուն մէջ եւ լիներուն ափունքին,  
Ու գետերու սուզն ի վար,  
Ուր ստրուկի հայ տուները կը կծկին,  
Ու ոպալէ արցունքներ՝  
Իր գեղեցիկ թերթերն ի վար կը հոսին:

«Երբ արագոտն մատղաշ ձագը այծեամին,  
Իր սարէ սար վագֆէն յոգնած, պահ մը միայն կը  
կայնի,  
Ժայռերն ի վար կաթած լացը՝ այգացօղը կարծե-  
լով՝

Կը մօտենայ եւ կը լգէ կարօտո՛ւ:  
Այդ վայրկեանէն լինդերուն մէջ կը փայլի  
Ատամնաշարքը ոսկի՛ . . .

«Եւ գեղջուկները հուժկու՝  
Անմատչելի ժայռերուն գիրկ ծուարած,  
Ու օտարը ոտք չէ դրած բնաւին,  
Երբեմն արծուի բոյներուն մօտ՝  
Խոտ հնձելու ժամանակ  
Զեռֆերնուն մէջ մանգաղը՝ ոսկի դարձած են տեսեր:

«Եւ յիշելով ծեր պապերնուն ոսկեխոտին ֆերթ-  
ուածը,  
Երկա՛ր օրեր հունձքը լքած, առանց հացի ու ծարա՛ւ  
Ժայռէ ի ժայռ կը թափառին,

Քարայծիւն հետ սիրավէր,  
Ա՛ն իր սիրածը փնտռելու եւ ոսկեխոտը՝ իրենք...  
Բայց, կըսեն թէ, դեռ ո՛չ մէկը  
իր փնտռածը գտե՛ր է:

\* \* \*

«Սակայն երբոր մեր դաշտերէն,  
Հայրենական ձորերէն, այգիներէն, սարալանջէն  
Գլուխը հակ, ամօք ո՛վ՝  
Կարուա՛ն-կարուան մեկնի օտարը պարտուած.  
Անշուշտ նորէն մեր ժայռերուն եւ լեռներուն մէջ՝  
անկախ,  
Պիտի փքքի ոսկեխոտը իր հասակովը փարքամ.  
Եւ լեռն ի վար պիտի հոսի երջանկութիւնը անխառն,  
Ու լիութիւնն անվախնան՝  
Հայաստանի մէկ հեռուէն միւսը...  
Եւ այդ օ՛րը՝ հեռու՛ չէ...:

Յունիս 16, 1913

*ՄԱՆՈԹ. — 1) Զօղան-լեռնային ամառանոց խաչնարած ցե-  
ղերուն յատուկ:*

*2) Վանատուր. — Նաեւ Ամանոր, Ամենաբեր. — Դիք Հայ  
պտղաբերութեան, Եղանակներու եւ Ժամանակի:*

*3) Աստղղան բերդ, Զիաթոնուկ, Գալիլիա՝ Վարագայ  
լեռին երեք կատարներն են:*





**ԱՐԵՒԱՄԱՐՏԸ**







## Ա Ր Ե Ւ Ա Մ Ա Ր Տ Ը

«...Եւ ի բոցոյն պատանեկիկն վազէր,  
Նա հուր-հեր ունէր.  
Ապա թէ բոց ունէր մորուքն,  
Ի աչկունքն էին արեգակունք»:

ԳՈՂԹԱՆ ԵՐԳԵՐ

Ամառի գիշեր մըն է կախարդական, փողոցներուն մէջը՝ կայքատօն է փքքեր ու տանիքներուն վրայ՝ վարդավառ: Գիւղին ամէն կողմէն կ'ուռի երգ մը աղմկոտ ու հզօր, եւ բոցավառող կրակներու հեւ-  
քին հետ՝ գիշերին՝ ու երազին մէջ կը լուծուի: Հո-  
վը մեղր ու հեշտանք կը մաղէ, եւ աստղերէն երազ ու  
սէր կը յորդին սիրտերուն մէջ ու թարթիչներուն վը-  
րայ մեր գիւղակի միամիտ կոյսերուն:

Հոգիիդ խորերէն, հզօր գետի մը պէս կը բոլսի ե-  
րանութիւն մը անխառն, բոլոր ուրիշ օրերու անծա-  
նօթ, եւ էութիւնդ ամբողջ՝ քաղցր հատնումով մը  
կը տոգորէ:

Ո՛վ անմեղ գինովութիւն հայրենի գիւղակիս, ու մանաւանդ, ո՛վ երագրեր հաշիշ վարդավառի բոցերուն:

Ու մենք երեք եղբայրներս չարաննի՛ մեր մօրկան վիզին կը փաթթուինք քաղցրօրէն ու կը խնդրենք որ մեզի վարդավառին հրաշալի հէքեաքը պատմերգէ: Ու մեղրաշուրթն մայրիկը, իր դէմքը նուիրական՝ խարոյկին բոցին կարմիրովը լուսագօծ, մեզի կը պատմերգէ Արեւին ու վիշապներու կռիւին սա վէպիկը միամիտ, որ, ո՛վ գիտէ, ո՛ր քափառիկ քերթողը սեւ ագռաւին սեւ փետուրովն է գրեր:

\* \* \*

—«Այն ոսկեղէն դարերուն, երբ ակերը ջուրին տեղ կը հսկէին կաթն ու մեղր, եւ անձրեւի փոխարէն առատ գազպին, ու ձիւնին տեղ նաշիհը՝ պուրակներուն եւ գիւղակին կ'իջնէին, այն դարերուն Ծաղկասարը՝ կախարդական պատկերի մը պէս փարթամ՝ բարկ արեւի մը տարփանքին կը փռուէր:

«Առոյգ ջուրերը, վանակնի պէս մաքուր, անմահական մեղեդի մը ծոցերնուն՝ որ տակաւին ո՛չ մէկ գուսան կրցած է իր սագին վրայ փայփայել եւ որ, անշո՛ւշտ, փրփրահեր ջրանոյշ մը անոնց ծոցիկն էր դրեր, ձորերն ի վար կը հոսէին ծաղկաշատ, քաւուտփներէն, վայրենապէս գեղեցիկ:

«Խորհրդամոլ անտառ մը՝ Ծաղկասարին գինով լանջը կը ծածկէր, ինչպէս անոյշ երագ մը կոյսին կոպերը լոյսէ, ու ծաղիկը չէր քօշնէր երբէ՛ք ծառին ոս-

տերն ի վար եւ երբէ՛ք աշունն անոնց տերեւները չէր խլեր...

«Ու երբ ձեռքդ մեկնէիր՝ արիւնագոյն ու ոսկի եւ շառաքոյր ու դեղին սաքին գոյնով պտուղները՝ ժըպիտներու պէս անուշ՝ ամփիդ մէջը կ'իյնային. ոստին վրայ ծաղի՛կն էին անթառամ եւ ձեռքիդ մէջը՝ պտուղ, չը քաշակուած երանութեան մը պէս քա՛ղցրը:

«Եզերքն ի վար աղբիւրին, որ հէֆեաթի կաթին նման անուշ էր, հազար գոյնի տասը հազար ծաղիկներ, շուրթերու պէս, աստղաձեւ եւ կամ ժպտող աչքերուն պէս՝ գրաւիչ, կ'արձակէին իրենց բողբոջը բարի. անոնց նեկտարը քարն էր ամէն ցաւին ու մահին...

«Եւ Տիգրիսը, դիւքական դայլայլի մը պէս հանդարտ, Ծաղկասարին պատկերն գրկած կը հոսէր, իր յատակի պարգուութեան մէջ բանալով՝ կաթին պէս ջինջ ու մարգրիտին պէս ներմակ խնամարեքը անթիւ՝ բիրտ աստղերուն եւ լուսնի պատկերներուն հետ մէկտեղ...

«Ու բարի մարդն այդ դարուն՝ քիթեռներու միամիտ ու ծաղկատենչ երազի կեանքը ունէր: Սակայն երկինքը մարդուն երջանկութեան ե՞րբ հաշտ աչքով նայեր է...:

. \* \* \*

«Անգուր վիշապն իր ձագին հետ ոնրածին, Ծաղկասարէն անդին այրի մը մէջ, ուր երբէ՛ք Արեւն իր

լոյսը բարեբար չէ ծագած, իր չարաշուֆ որջը դրասեւ օր մը. ու չարիքը անկէ խաւար գետին պէս ամէն կողմը թաւալեցաւ անկապո՛ւտ:

«Ծաղկասարին մէջ հազար ծաղիկները արմատներուն վրայ չորցան, ու հազար ծառերն իրենց պտուղները կուլ տուին անոնց ֆովէն երբ վիշապները անցան: Նայադները ակերն ի վեր չֆացան, անտառն մահի լոռութեան գիրկը լֆած, եւ առուններն իրենց կարկաչը մոռցան՝ դողի մը մէջ ահաւոր:

«Գիշերն սարսափը դարձաւ, լիալուսնակն արիւնի մէջ թաթաւուն՝ չարաշուֆ աչքը անոր. եւ մութին մէջ, անդունդի մը գլխահակ, գիւղը սարսափը հագաւ...

«Որովհետեւ հագիւ վարդերը վերջին՝ իրիկունի փունջերուն՝ լեռներուն վրայ թափթֆած, իր սեւ որջէն վիշապը դուրս կը հոսէր գագիւր կոյտն իր մարմինին եւ ձագին հետ դէպի գիւղը կ'ուղղուէր:

«Կէս գիշերին դժխեմ գոյգը՝ սովալլուկ եւ յոգնած՝ գիւղին ցածկեկ տանիֆներուն վրայ հանգիստը կ'առնէր, երբոր արթուն շուններն իսկ, սոսկումէն յամբ, դունչերնին թաթերուն մէջ կը պահէին դողահար:

«Եւ լուսնակին լոյսին տակ, որ ա՛լ ջրվէժն էր յորդահոս լացերուն, մահինները կը հեւային պարապէն մարմիններուն, որ պահ մ'առաջ անոնց մէջ կը փըթթէին վարդին պէս:

«Ու երբ լուսաստղն ահաբեկ՝ դէմի լեռի կատարէն  
անբախտ գիւղին կը ծագէր, լոկ այն ատեն այդ վի-  
շապներն ոնրապարտ՝ կը բռնէին ֆամբան խաւար  
անձաւին, յաջորդ գիշերը, նորէն, Թշուառ գիւղին  
գերեզմանոցն ըլլալու...»

«Գեղջուկները ահաբեկ՝ կտուրներէն տունին խո-  
րերը իջան. յետոյ իրենց վրդով ֆունը սարին անել  
ծերպերուն մէջը տարին, եւ իրենց սուգն անպատում՝  
անյիշատակ այրերուն մէջ քաղեցին. բայց մարդկա-  
յին միսի հոտէն խելայեղ՝ վիշապները ամենուն ալ  
հասան:

«Գիւղը անվերջ սուգի մը գիրկը ինկաւ: Դաշտե-  
րուն մէջ ա՛լ լոեց աշխատանքին հզօր երգը բեղմնա-  
ւոր. մատղաշ գառներն եւ ուլիկներն երկուորեակ՝  
Ժայռերուն վրայ անմատոյց եւ ամայի ձորերն ի վար՝  
վայրենացան անհովիւ:

«Եւ գիւղակին ծերերը ու պառաւները ցառոտ՝ ցու-  
պին յենած իրենց անտէր մարմինը՝ անհայր, անմայր  
քոռնիկներուն օրօրոցին վրայ ծռած կը տֆային ըստ-  
ուերներուն պէս դաժան, որոնց մարմինը գերեզման  
չէ տեսած:

«Գիւղին մէջ պատանի, երիտասարդ եւ չափահաս  
ա՛լ չը կար. օրօրոցին մանուկներն ալ կը տարուէին  
մէկ առ մէկ:

\* \* \*

«Երբ առաւօտը եկաւ, եւ գիւղն հսկայ իր սուգը  
մուրի գուրէն արշալոյսին տակ բացաւ, երամ-երամ

քոչնիկներէն մէկ հատն անգամ չէր կեցած՝ բաց դուռերէն ներս անոր բախտը լալու:

«Ծխաններէն մետաքսի նուրբ ամպին պէս անուր-  
ւան ծուխը երկինքին մէջ չէր կախուեր, որովհետեւ  
ընտանեկան ակութեամբուն մէջ վաղուց սրբազան հու-  
րը մարեր էր գիշերով. եւ պուրակին ու աղբիւրին  
նամբուն վրայ ջուրի գացող աղջիկները չկային, ո-  
րովհետեւ քունի մէջէն, դեռ երագին անձնատուր,  
առեւանգուած էին մահէ մը անլուր...»

«Քարի արեւը ծագեցաւ այդ ծխագուրկ գիւղին  
վրայ, ինչպէս ծագած էր երբեմն՝ երբ երագի ու եր-  
ջանիկ քմբիւրի ծոցէն գիւղը կ'արթննար՝ հարսի մը  
պէս նագենի, ու նաեւ երբ սարսափին ու խաւարին  
տակը կ'իւծէ՝ տենդոտ իրեն կ'սպասէր:

Վիշապները՝ խրախնանքին անձնատուր՝ մոռցեր  
էին այդ գիշեր թէ վերջապէս պիտի Արեւը ծագէր.  
չէին տեսներ թէ Արուսեակն ահաբեկ՝ իր հսկումին  
տրտմութեան մէջ կը մարէր. եւ առաւօտը զանոնք  
Տիգրիսին ափը գտաւ՝ լոյսին գրոտ յորդումին մէջ  
դողահար:

«Անոնց մարմինը կանաչ գոյնը ունէր, մաղձին գոյ-  
նը հիւանդոտ, որուն վրայ վերքի պէս աստղերն ու  
մութքը իրենց պատկերն էին դրոշմեր. աչքերնուն մէջ  
չար դեղինը կը վառէր. մահին անգութ դեղինը, եւ  
խելայեղ գոհերուն՝ գոց շուրթերուն պաղատագին  
դեղինը:

—Ստոր սողո՛ւն, կանչեց Արեւը վերէն, ամայութեան մէջ գիւղին, որ անմեռել գերեզմանոցն ըրիֆ դուք, իմ սրբազան շողերս՝ տրտում կը մեռնին. գիւղին վրայ, որ Վահագնին էր ձօնուած, հիմա բուերը կը պտուտփին վայիւնով. մարած ակուքներուն ֆով, նարօտները կը դեղնին, նարօտն առոյգ սէրերու... ո՛վ պիտի ձեզ ազատէ իմ լուսարդար գայրոյթէս:

«Եւ Արեւը հաւաքեց իր բոցերը բովանդակ—հրեղէն թուրերն արեւորդի Վահագնին, եւ բոցերու հեղեղին մէջ՝ անհամբեր վիշապաֆաղ աստուածին հըպարտ դէմքը կը ժպտէր:

«Սարը ամբողջ չը տեսնուած ջերմի մը ծոց կը մըխար. ան Արեւի կռուի հրաւերն էր կարմիր:

«Վիշապները իրենց սիրտի ամբողջ թոյնը, աչքերուն մէջը կուտած, երախաներէն կանաչ ծուխ մը ժայթֆեցին, ատելութեան եւ չարիփին պէս առատ: Անոնց մարմինը ֆրտինֆով պտղեցաւ, սեւ ֆրտինֆով որ ոնիրն անոնց գազիր մարմնին խորերն էր դրէր. եւ բոցերէն խարանուած՝ գալարուեցան՝ մոլեգին վերջին նիգով մը անյոյս՝ Արեգակին երեսն ի վեր նետուելու:

«Նոյն վայրկեանին իսկ շողաց Արեւին սուրը հրեղէն եւ վիշապներն իրենց ցասման թռիչքէն գետին ինկան անկենդան, ատելութիւն ու սարսափ դէմքերնուն վրայ ֆարացած... Լեռը ամբողջ ամայացած էր Արեւի բոցերէն...»

Ու վերն, այնտեղ, ուր սարը կապոյտին մէջ կը լուծուի եւ ուր ամպերը երբեմն, շանքէն ծոցուոր, որոտումը ծնանելու կը կենան, հո՛ն կուշտ կուշտի, հագար վէրքերով վիրաւոր դեռ կը տեսնէ՛ք քար կըտրած այդ աժտահար վիշապներն:

Աջ կողմինը որուն ցաւի գալարները վերջ չունին եւ քարացած վէրքէն իսկ դեռ քունալից կեղտ շարաւը կը ծորի, մայրն է կ'ըսեն, եւ կատարէն քանի մը քայլ միայն վար, անոր ձագն է ոնրածին:

Ո՞ր սեւ դարէն, որ հիմա երեւոսէ խաւարին գիրկն է քաղութր, հոդ կը պառկին այդ անիծեալ վիշապներն, ո՛չ ոք գիտէ, ո՛չ ալ երբէք հնար է ծեր անցեալին խաւար արգանդը յուզել...

Վարը Տիգրիսն է յստակ, որ դաշն ու խուլ կանչով մը իր առափնեայ ուռիին ու քարերուն քսուելով՝ օրհասական վիշապին պէս գալարուն՝ կը սողոսկի հովիտն ի վար ծառաշատ:

Գէմը սարն է մեր գիւղին՝ իր հովասուն պուրակովն ու ձորերովը գմբուխտ, ո՛ւր շարունակ կը հընչեն առուին կարկաչն արծաթէ եւ սիրահար մշակին սիրերգները սիրագեղ...

Ու հո՛ն, դէպի աղօթքան, նախատինքի մը պէս մերկ՝ վիշապասարն կը կանգնի՝ պատուհասուած, ամա՛յի...

*Ապրիլ 10, 1918, Ֆիլասոփիա*



ՎՐԷՆ ՈՒ ԶԻՆ





## Վ Ր Է Ն Ո Ւ Զ Ի Ն

Վիշտըս, հեղ մ'ալ՝ մինչեւ շուրթերըս յորդած  
Այս սեւ երգիս մէջէն հոսի թո՛ղ պզտոր,  
Խօ՛ղ ու անգուսպ, ինչպէս ուսին\* յեղակարծ,  
Ու ւլեկոծ ծովի մը պէս ահաւո՛ր...

Սիրողներուն եղե՛րգն է որ ես կ'երգեմ,  
Եւ ամենէն դժբախտ երագն ու արդար,  
Որ կը քանդուի ինչպէս դարպասն հոյաշէն,  
Հագիւ կանգնած ասին գետակի մը պայծա՛ր...

Է՛յ փուն *աստուոր*<sup>1</sup>, դագաղին պէս ծաղկապատ,  
Մեզ կը տանիս դէպի տանջանքն անվախնան,  
Ուր որ դաժան բախտին ձեռքը ապիրատ,  
Խաչքար մ'է դրեր մեր յոյսերուն յանդիման:

\*Ուսին - ձիւնի հիւսը.



## ՆԱԽԵՐԳԱՆՔ

Ռագմի կոչերը յուսահատ՝  
Յաղթանակի երգերու մէջ էին մարեր.  
Ու հրդեհուած հայ արտերը, անգամ մըն ալ՝  
Ոսկեծփուն ծովերն էին ատո՛ք հասկի:

Հովիտներու եւ սարերու գմբուխտին մէջ՝  
Մանեակներու պէս՝ հայ հօտերն շարուեր էին.  
Ու նախիրներն մարմանդներէն, ոսկեփռչի նամբա-  
ներէն,  
Իրիկունի սիւֆերուն հետ, երանութեան բառաչնե-  
րով՝

Գիւղերուն մէջ կը հոսէին,  
Ուր ամէ՛ն տուն ամբար մըն էր բարիփներու:

Եւ գուսաններն՝ խարտեաշ հասկի պսակներով,  
Ալիփները թուխ մագերուն,  
Գիշերին պէս՝ յաղթ ուսերուն վրայ փռած,  
Քաղաքն ու գիւղն իրենց երգերն կը տանէին:

Եւ աչագեղ հայուհիներն,  
Աւետիկէ՞ լօշերուն՞ մէջ մեղր եւ կարագ եւ սեր դրած,  
Ու համբոյր մ'ալ իրենց փքքուն շրքունփներէն,  
Այդ ֆաղցրախօս գուսաններուն կը վազէին:

Ու պարմաներն՝ մրտենիէն եւ խաղողէն պսակ  
հիւսած,  
Պաշտամունքով կը դնէին այն գլուխներն,

Որոնց մագի թուխ ալիֆներն երգերնուն պէս  
Հայրենական սիւֆերուն գիրկ կը ծփային:

Իսկ գուսաններն տաւղին վրայ կամ սրինգի հեծ-  
ֆերուն հետ,  
Կը պատմէին հերոսական կոիւներէն,  
Ուր եօթն անգամ վիրաւորուած հայորդիներն,  
Յաւերժական Հայաստանը օրհներգելով,  
Հնձօրի մը իրկուան պէս,  
Մինչեւ մարիլը ժպտելով մեռեր էին:

Ու կ'երգէին գեղջկօրէն պարզ այն սիրերգեր,  
Որոնց անմեղ ողբերուն մէջ,  
Ամէն սիրողն իր իսկ սիրտին դողը կ'զգար:

Կամ պարգունակ այն կոյսերը կը գովէին,  
Որոնք վայրի ծաղիկներուն պէս անգիտակ իրենց  
գեղոյն,  
Իրենց անմեղ կախարդանքով՝  
Հայ տուները դրախտներու կը փոխէին:

Երգէն գինով բազմութենէն,  
Յանկարծ առոյգ ասպետ տղայ մը կը կանչէր.  
—Վարպե՛տ, ձայնդ մեղրածորան,  
Մեր սրբազան չորս գետերու ջուրի նման  
Վնիտ ու յորդ թող միշտ հոսի՛,  
Տարօնի տան սէզ արծուիկին՝ վրէնին գովքը  
Երգէ՛ մեզի:—  
Եւ գուսանը տաւղ կ'առնէր,  
Ու աչքերը հայ երկինքին թովֆին յառած,  
Այսպէս կ'երգէր.

—Այս խեղճ Գուսանս ինչպէ՛ս երգէ գովքը անոր,  
Որուն անուն արեւին հետ կը ծաւալի:  
Ու մութին մէջ, իբրեւ երագ, իր անձն աղուոր՝  
Կոյսերուն բուն կ'ընէ խոռով եւ աչքն՝ աղի՛... .

Մեղրագետի ասկերուն՝ բով ո՛չ մէկ բարտի  
Պիտի հասնի անոր մարմնի դալար գեղոյն.  
Ու սրբազան գագաթը մեր Արարատի  
Զունի վայել փառքը անոր հպարտ գլխուն:

Վիզն Անիի աշտարակի մըն է նման,  
Եւ անոր շուրջ ալեկոծող դրօշակներուն  
Ծփանքն ունին իր մագերը. ու սրբազան  
ժամու կամարն ձե՛ւն է առեր իր յօնփերուն:

Դիւթանքն ունին անոր աչքերն երագունակ՝  
Անդունդներուն մէջ քնացող լնակներուն.  
Որոնց վրայ լուսնի ցոլք մ'է ինկեր ներմակ,  
Ու ծիր-կաթնի միակ շերտ մը՝ կաթով օծուն:

Ու բագուկներն պողպատէն են կարծես շինուեր,  
Որմէ նկուն արար թուրեր կը դարբնըուին.  
Ու քարայծէն է ան առեր իր սրունքներ,  
Որ եղնիկներ հալածելէն յոգնիլ չ'ունին:

Երբոր որսէն ետ կը դառնայ հետ քաջերուն,  
Կոյսերը թարմ վերքերուն բով վերք մը բռնած,  
Վարդ կը ցանեն նամբուն վրայ եւ իր գլխուն.  
Եւ մէկ ժպտով կ'զգան գիրենք փոխարինուած... .

Ու բագմութիւնն հիացումով կ'աղաղակէր.  
—Ապրի՛ վրէնը, արքայորդին մեծ Տարօնի՛ն:

Եւ աղջիկ մը, գարդոսկիներն իրեն նակտին  
Պատարագի ծնծղաներուն պէս հնչելէն,  
—Գուսա՛ն, կ'ըսէր, քող տարիներդ  
Մայրամուտի բարտիներուն ըստուերներուն պէս եր-  
կարին,  
Ու քու ձայնըդ կարկաչներու պէս քաղցր յորդի,  
Մոկաց տունի հրեղէն կոյսին—Զինին գովքը ըրէ մե-  
զի:

Ու երգիչը համակ կորով,  
Տաւղին լարերը կոտրելու չափ տենդագին,  
Այսպէ՛ս կ'երգէր.  
—Մենաւոր լինի ափին վրայ փքքուն՝  
Դալար եղէգի հասակն ունի Զին.  
Եւ իր քայլերու նագանքն ոլորուն՝  
Անգէտ չօրօքն՝ է Սինամ՞ կափաին:

Աչքերն իր դուռերն են մութ անձաին,  
Ուր անքիւ գանձեր կան հի՛ն դարերէն.  
Ու հոն ներս մտնողն ետ չը գար կրկին.  
—Բայց մահն անարգող քաջերն հազա՛ր են:

Մազն իր անտառն է յաղթ մայրիներուն՝  
Գետակի երկու ափերուն ձգուող.  
Ու իր պարանոցն՝ ջրվէժն անանուն,  
Մարմար ժայռերէն կաքի պէս քափող:

Իր նուրբ բագուկներ՝ ձուկերն են արծաթ՝  
Կախարդ ծովերու պէտէն որսացուած,  
Իր ծոցն մաքուր է քան եղնիկին կաք,  
Որմէ երկուորեակ ուլեր են իմած:



Իր ժպիտն՝ անմեռ քովքն ունի այգուն,  
Որ փոքորիկէ մը ետք կը լուսնայ,  
Որուն որ ժպտի խեւ կ'ընէ անտո՛ւն.  
Իր չը ժպտածին աչքը միշտ կուլա՛յ:

Ու երբ կը քալէ ծաղկոցի մէջէն՝  
Վարդերը մինչեւ գետին կը հակին,  
Եւ անոր ոտքերն պագնելու տենչէն՝  
Թերթ քերթ կ'արիւնին վրայ սալարկին:

Կարմիր կօշիկով եւ կապարնն ուսին՝  
Երբ Տիգրիսն ի վեր Զին որսի կ'երթայ,  
Ամէն լան կ'ուզէ վէրքն անոր նետին՝  
Այծեամին փոխան՝ իր իսկ սիրտին գա՛յ...:

\* \* \*

Եւ մթնշաղն իջած կ'ըլլար դաշտին վրայ.  
Ու հեռաւոր կալերուն մէջ,  
Լուսնի լուսով եւ աստղերուն քթումին տա՛կ  
Յորեկն անդուլ կ'էրանէին՝:

Յարդի շիւղերն, ծիր-կաթինի հոյլերուն պէս,  
Հովիտն ի վար կը պարէին.  
Ու հատիկներն սրսուս՝ ոսկի՝  
Կալերուն մէջ գուարթ շեղջեր կը կազմէին:

Երգէն գինով գիւղին վրայ  
Գուսանն վերջին իր մեղեդին օրհներգելով,  
Շիւղերուն պէս՝ երագին գիրկ անհետացող  
Ոլոր-մոլոր արծաթ ֆամբան փնտռել կ'ելնէր:

Ու միամիտ գուսան մ'աշայէ՛ս  
Քաղէ՛ք քաղաք Զինին գովքը պատմերգելով՝  
Տարօնի տան յաղթ ամբոցին ոտքը հասաւ:

Ափը կեցաւ երագածոր ակնադբիւրին,  
Որ սուրբի մը մարմար աչքէն՝  
Մեծ բարութեան մը լացին պէս  
Զրուորներուն կարմիր հողէ կուծերուն մէջ կը կար-  
կաչէր:

Ու աղջիկները հերթ բռնած ուռիին տակ,  
Մէկգմէկու ականջն ի վար  
Զուրին նման իրենց սէրեր կը մնջէին:

Եւ կոյսէ մը իրեն տրուած նախշուն քասը  
Երեք անգամ պարպելէ ետք,  
Երգ պաղատող աղջիկներուն՝ գուսան Զինին գովքն  
էր երգեր:

Վրէն, որ յաջող որսէն դարձին  
Մետաքսահիւս բարձերուն վրայ հանգիստ կ'առնէր,  
Իր սիրտին մէջ Զինին պատկերն գծուած զգաց,  
Ու մաս դարձած իր արիւնին եւ իր միսին:

Ճաշի ատեն բարի գուսանն իրեն կանչեց.  
Ու երէի լեզուներէն շինուած խորտիկ կերցնելէն,  
Եօքը տարուան նռան գինին՝  
Ոսկի քասով՝ անոր ըմպել տալէն յետոյ,  
Իր աջ ձեռքէն հանեց սուտակ քանկ մատանին,

—Վարպե՛տ, ըսաւ, ազնուական եօքը տունի  
Հօք սէրի ուխտն է կնիքը ա՛յս մատանին.  
Սա՛ իմ սէրին նշանը տա՛ր քաղցր Զինին,

Ըսէ՛ որ սիրտս իրեն համար՝  
Ասոր գոյնով՝ միշտ կը վառի՛:—

Ուխտի օր մը, վանքի բակին մէջ տօնական,  
Զին լսած էր գովքը Վրէնին.  
Ու քանչցած էր մենութեան մէջ եւ երագին  
իրեն ժպտող պատկերը քաղցր իր ասպետին,  
Որ իր սիրտէն յափշտակած՝  
Բարի գուսանն այդ երգին մէջ արտասուած էր:

Ու ստուգած թէ, արդարեւ,  
Այդ պատկերը մարմին հագեր է ու կ'ապրի.  
Իր իսկ թովքէն քափուր վարդին պէս շիկնելով,  
Զմբուխտ մատնին իր նուրբ մատէն դուրս էր հաներ.  
Ու գուսանի դողդոջ ափին մէջ դնելով՝  
Պաղատե՛ր էր,

—Ըսէ՛ Վրէնինի, որ իր սէրը—դալա՛ր բաղեղ—  
Այս նորածիլ կեանքիս այնքա՛ն է պլլուեր,  
Ու թէ փորձէ ծաղկեալ փաթոյթն քակել սիրտէս  
Այնքա՛ն ամուր է պլլուեր ան հասակիս,  
Որ որք կեանքս ալ պիտի քակէ ան իրեն հետ:

---

*ԾԱՆՈԹ.* — 1) աշխարհ, 2) թուխ ցորենի տեսակ մը, նշա-  
նաւոր իր համուրը. 3) բարակ բացուած հացը. 4) կաքաւի  
սիգանեմ քայլուածքը. 5) կաքաւին դեղեցիկ տեսակը. 6) զը-  
տելու համար հովին տալ. 7) մաքուր, հատիկի համար միայն  
դործածական:



Ա.

Սպասումի աղբերա՛կ,  
Ուր աղջիկ մը հովին մագերը ֆակած,  
Պուրակին եզր՝ պաղատագին կեցուածքով՝  
Մարմար արձան է կտրա՛ծ:

Եւ աչքերէն այտերն ի վար,  
Ու վար կոյսի իր ծիծերէն կը հոսի  
Աղբիւրն իբրեւ արտասուֆ:

Ան՝ հեռուին սեւեռուն՝  
Փո՛ղթ չըներ քէ հովն վերարկուն է տարեր.  
Թէ՛ հայ կոյսի իր մերկութիւնը ծածկող  
Միակ շապիկ մ'իսկ չ'կայ.

Թէ՛ սրունքներն իր կաթնաթոյր ու մատղաշ՝  
Կը մամոռտին հովերուն գաղջ համբոյրէն,  
Թէ՛ ծոցին մէջ քիթեռնիկներ կը լոզնան,  
Ա՛ն փոյթ չընե՛ր բնաւին...

Հին գրոյց մը կը պատմէ  
Թէ՛ ան նոքհարսն է՝ սպասող իր ֆաջին,  
Որ հասնիֆի փառֆին մէջ,  
Հայաստանին ու կռուին կոչը լսած,  
*Փեսապարէն*<sup>8</sup> դէպի կոիւ խոյացաւ:

Տարիներու իր վառ երազը սէրի  
Դեռ իր հօր քազուկներով չի գրկած,

Ու չը քաղած նոյն իսկ համբոյր մը ծածուկ,  
Ա՛ն մարտին դաշտը փութաց:

Եւ ողջերքի համբուն վրայ,  
Մագերն արձակ հարսն իր քաջին սպասեց,  
Տարիներու ամբողջ իր սէրն ու կարօտ  
Միակ ժպտին մէջ դրած.

Ու սպասեց յոյն արձանին պէս աղուոր,  
Մինչեւ՝ ժպտն աշտերուն հետ գունատած,  
Ինքն ալ արձան կտրեցաւ.  
Որպէսզի իր նոյս քարմութիւնը պահէ  
Մինչեւ սիրածը յաղթական իրեն գայ,  
Պագով մը զինք նորէն կեանքի կանչելու...:

Այս դիւքական աղբիւրին քով  
Հովուուհի մը՝ եօթը տարի՝ գառներու հօտն էր ա-  
րածեր.  
Եւ գառնուկներն՝ պտուկներուն պէս իրենց մօր՝  
Ամէն Մարտին երկուորեակներ էին ծներ.  
Մէ՛կը՝ ներմակ ցերեկին պէս եւ մի՛ւսը՝ թուխ ինչ-  
պէս գիշեր:  
Եւ հովուուհին ամէն տարի եօթը նոր տաղ էր յօրի-  
ներ,  
Թիթեռներուն եւ իր հօտին սրնգելու:

Ու վերջին տաղն իր երգերուն՝  
Հեռուէն եկող մեծ ասպետի մըն էր ձօներ,  
Որուն դժբախտ գեղեցկութիւնն  
Քրոջ մ'անկեղծ իր արցունքով պիտի օժէր:

Եւ տօսախտ է իր *կօտին*<sup>9</sup> մէջ ամէն կէտօր  
Թուխ մաքիի մը քանձր կաթ կթելէ ետք,  
Ակնաղբիւրի պաղ ջուրին մէջ էր գայն դրեր.  
Որ քէ ծարաւ ասպետն իրմէ ջուր խնդրել գար,  
Ինք ջուրին տեղ անոր կա՛ք տար:

Եւ Յունիսի գաղջ միջինին,  
Ան իր գառներն արօտներէն, գիներբուկի ածուներէն  
Գէպի *բէբբ*<sup>10</sup> կ'առաջնորդէր  
Սա հովուերգը չորս հովերուն մեներգելով.

—Մաքիներու հօտն է կ'իջնէ բլրակէն,  
Հրանունկի եւ նարգէսի պուրակէն.  
Ու ծիծերնուն մէջ այնքա՛ն կաթ է յորդած,  
Ուրկէ անցեր ներմակ վարդեր են ցանած.  
    Հօ՛յ, իմ գառներս երկուորեակ,  
    Հօ՛յ, հօտըս քուխ ու ներմակ:

Ձեզ երագիս հովտին մէջն եմ արածեր,  
Ուր դունչերուդ պագին շուշանն է բացեր  
Թասն իր կախարդ՝ մեղր ու մուշկով ինքնայորդ.  
Աղբիւրն եւ զիս ըրած ումպի մը հաղորդ:  
    Հօ՛յ, հօ՛յ, նախշուն գառնո՛ւկներ,  
    Հօ՛յ, իմ հօտիկս կաթնկեր:

Սրինգս կոտրե՛ր, ինչպէ՛ս ջրերգս պատմեմ ձեզ,  
—Շուրթերս ո՛րք են մնացեր անմայր գառին պէս.  
Ա՛խ, դեռ չեկա՛ւ իմ հրեղէն ձիաւոր  
—Ու հովուուհին երգ ու սէրի է սովոր...  
    Հօ՛յ, հօ՛յ, գառներս իմ նախշուն,  
    Հօտըս կէս քուխ ու կէս՝ ձիւն...:

Եւ հովուուհին դեռ իր հովուերգը չաւարտած՝  
Արճայանիստ վանը տանող լա՛յն նամբայէն՝  
Զիաւորի մը դռոյթը քառասմբակ՝  
Փոթորկին պէս՝ դէպի աղբիւրն իջնել տեսաւ :

Բարի գամփոք իրեն հօտին՝  
Յարձակումի խոպոտ հաջիւն մը պոռալով,  
Դէպի հեծեալը խոյացաւ .  
Ու գառնուկներն՝ սարսափահար՝  
Իրարու վրայ խոնուեցան վայրկեանաբար :

Իսկ հովուուհին կաղնի իր *կոռը*<sup>1</sup> շարժելով,  
Եւ կեցուածքով մը տիրական՝  
Վերադարձը հրամայեց ցասկոտ գամփոին,  
Որ քծինքով մը հնազանդ՝  
Եկաւ՝ իր գլուխն անոր ոտքին տակը դնել :

Գիշերն ի բուն մոլեգնտող փոթորկին պէս,  
Որ նոր այգի մը ծագումին՝  
Համբոյրի պէս քնքոյշ սիւփի մը կը փոխուի,  
Այնպէ՛ս հեծեալն իր խօլ դռոյթը մեղմացուց,  
Երբոր դալար հովիւ կոյսը  
Լուտասի մը պէս ակին քով կայնած տեսաւ :

— Հովի՛ւ աղջիկ, ծաղիկ աղջի՛կ, քեզ բարի օ՛ր .  
Ո՞ւր կը տանի արդեօք նամբան այս երագի,  
Որ պարանի մը պէս ոսկի,  
Մարգերուն մէջ եւ ձորն ի վար կը սողոսկի :

— Ասպե՛տ տղայ, ա՛յ քաջ տղա՛յ, օրըդ բա՛րի .  
Նուռ ու վարդի ու գինիի ոստան տանող



Հոյս Բարուարին է ան նամբան.

Ու աղբիւրէն մինչեւ քաղաք փարսախ մ'է ան:

—Ով կոյս, ջուրի կարկաչէն իսկ քաղցր է քու ձայն,  
Ու դէմքդ բարի է օրին պէս.

Ըսէ՛ ինձի, կախարհոյ աղջիկ,  
Ի՞նչ է անունն այն հիւրընկալ եւ շէն տունին,  
Որուն սեղան՝ մատուռի մը դուռին նման՝  
Բա՛ց է երգչին ու նամբորդին:

—Անո՛ւշ տղայ, կախարհ տղա՛յ, դուն թէ ասպետ,  
Թէ իմաստուն, եւ թէ իշխան ինձ կը թուիս.

Իշխաններուն մէջ թէ իշխա՛ն ըլլալ կ'ուզես,  
Մեծ նախարար վարագդատին  
Մարմարակերտ ապարանքը քէ՛լ քու ձին:

Քերթողներու, գիտուններու կանառին մէջ  
Թէ համբաւի փառապսա՛կը խլել կ'ուզես  
Բակուրի նոյս դուռին առջեւ քու ձիդ կեցո՛ւր:

Իսկ թէ կռուի ասպետական խոյանքներուն  
Փառքին տե՛նչն է մէջդ կը վառի,  
Դիւցազնական Մեհունդակին դղեակն ըրէ՛ քեզ հան-  
գրբուան:

Ու ձիաւորն, որ վրէնն էր թափառական,  
Դռոյթով մը մրրկավագ,  
Դէպի դղեակն Մեհունդակին քէնց իր ձին:

Եւ ետեւէն այդ խօլարշաւ ձիաւորին՝  
Հովերուն պէս հառաչելէն,

Հէ՛ք հովուուհին տեսաւ տօսալս կօտը կաթին,  
Որ մոռցեր էր իր ասպետին ըմպել տալու,  
Անոր թովփին տակն ըլլալով այնքա՛ն կապտուած:

Ու եօթը ժիր տարիներուն մէջ առջին հեղ,  
Ա՛ն իր հօտիկն արօտներուն մէջը լքած,  
Կաթին կօտը ֆարերուն դէմ փշրելէն ետք,  
Հող սպասող արձանին պէս,  
Իր առաջին վիշտն հովերուն ան հեկեկաց...:

- 
- 8) Հարսնիքի ատեն փեսային պարը.  
9) Փայտէ շինուած կլորածեւ պնակ.  
10) Ոչխարներուն մակաղատեղի.  
1) Հովիւին կորագլուխ մեծ դաւազանը.



Եւ Մեհունդակ գտաւ, որ վրէն  
 Մոկաց հազար ջուրերուն պարզ հայելին կը կրէր  
 իր հոյակապ կուրծքին տակ.  
 Եւ իր կախարդ հասակի՝ ազուրուրեան վայելուչ՝  
 Արիութիւն մը մեծոգի եւ խրոխտ:

Վրէնն ալ իր հոգիին եւ սիրավառ իր սիրտին՝  
 Աննենգ պատկեր՝ Մեհունդակին մէջ գտաւ.  
 Եւ խենթօրէ՛ն անոնք գիրար սիրեցին  
 Ինչպէս բանտուած գոյգ մը արծիւ տարփաւոր:

Եւ իբրեւ ուխտն աննենգ՝ անմեռ այդ սէրին՝  
 Իրենց առոյգ բազկերակներ բանալով,  
 Թողին որ տաք ու շիկաքոյր արիւնը  
 Մէկգմէկու բազուկներուն մէջ հոսի:

Ու կ'ապրէին ալ՝ անբաժան իրարմէ  
 Ինչպէս ուռին եւ իր շուքը հոտեւան:

Բայց իսկութիւնը վրէնին՝  
 (Մեհունդակին լոկ ծանօթ) հզօր գաղտնիք մը մնաց:  
 Որովհետեւ Զինին սէրով վիրաւոր,  
 Արքայական մեծ որսի մը միջոցին,  
 Ան ծպտուած եւ աննկատ փախեր էր՝  
 Ասպետի պէս իր սիրածը փնտռելու:

Շաբաթներ ետք՝ իր ընկերներ՝ ժայռերէն  
Գտեր էին իր հագուստներն արիւնոտ,  
Եւ արար թուրն ու ազեղ՝  
Քաջը մեռած գեղուհիին պէս՝ լճուած.  
Եւ արժունիքն ու Տարօն  
Երեք անգամ քառսուն օր սուգ էր պահեր  
Վրէնի մահուան համոզուած:

\* \* \*

Այսպէ՛ս գահը, փառքն ու անունը թողած,  
Արտակ սասկետ (զի այս անունն էր իր նոր)  
Անյայտ մարդու մը պէս եկեր էր Բարուար.  
Սակայն հագիւ տարի մըն էր բոլորած,  
Երբ իր համբաւն երկրէ երկիր կը պանծար:

Զիարշաւի դոռոյթներուն մէջ հօօր,  
Շանթը հեծնող վիուկին պէս հրեղէն՝  
Ան իր Յոլակն էր վարեր,  
Մրրկաբաշ ու փրփրերախ ծովին պէս—,  
Դէպի փառքին ու ծափերուն մրցանակ:

Ու տոփիւնով մը հպարտ,  
Մուրտի պսակն իր գանգրահեր գլխուն վրայ,  
Եւ բուռ առ բուռ վարդեր ձիուն ոտքին տակ  
Ան դարձեր էր մրցումներէն՝ յաղթակա՛ն:

Ամեհի ուժն անոր անկոխ մարմինին  
Ամէն ըմբիշն իր մարմնոյն վրայ էր փորձեր,  
Բիւզանդիոնէն մինչեւ Զին,  
Եւ Կովկասի կատարներէն մինչ Ինդոս:

Քանի մէջֆերը վիթխարի ու հզօր,  
Աշունի չոր տերեւներու կոյտին պէս,  
Խշրտացեր էին պողպատ քափին տակ  
Անոր ջլուտ բագուկներու օղակին:

Փորձ որսկանները տոհմիկ՝  
Ապշեր էին անոր նետի անվրէպ  
Իր քիթախը գտնելուն:

Կածաններու, անել նամբուն իսկ սովոր՝  
Սարորդիներն արագուն չէին կրցեր հետեւիլ  
Ժայռէ ի ժայռ, կատարներէ գահավէժ՝  
Անոր խիզախ եւ խօլական վագֆերուն:

Ո՛վ կախարդանֆն իր գնացֆին սիգապանծ,  
Ո՛վ դաշնութիւնը ձեւերուն իր նկուն,  
Եւ քաղցրութիւն կերպարանֆին իր մատղաշ:

Ուրկէ՛ անցնէր աչֆերն ամէն կոյսերուն  
Իր հետֆերուն կը գամէր.  
Եւ իր ամէն մէկ նայուածֆի քովֆին մէջ՝  
Տասը հագար գարնուած սիրտեր կը քաղէր.  
Կարծես դագաղն ըլլար անյոյս սէրերուն:

Այսպէս Նուարդ՝ քոյրն ալ գիտուն Բակուրին,  
Վրէնի սէրովն էր խոցուեր.  
Ու վիրաւոր եղնի մը պէս առանձին՝  
Փախի նամբան իր արիւնով կը ներկէր:



Դղեակի բակն ու ճամբան՝  
 Վարդ ու նարգէս են փոեր.  
 Գուռ մը գինին, մէկ՝ հինան՝  
 Դուռին վրայ են դրեր:

Շատրուանին ճիշդ դիմաց  
 Ամպհովանի են կանգներ.  
 Սիւնն ոսկիով է ծեփուած,  
 Եւ թանկ սնդուս են բարձեր:

Վրէնին հետ՝ սարերէն՝  
 Որս է բերեր Մեհունդակ.  
 Քառսուն կոյսեր կը պարեն  
 Լիալուսնի ցոլփին տակ:

Եւ գուսան մը՝ Ոստանէն՝  
 Կ'երգէ քաջերն այն համակ,  
 Որոնց ձիերն են հրեղէն,  
 Եւ զէնքն ու թուրն են կայծա՛կ.

Նռան գինին կը հոսի  
 Վառ արիւնին նմանակ.  
 Թակոյկն է սիրտ մը կոյսի,  
 Եւ գուտ ոսկի է բաժակ:

Որովհետեւ այն գիշեր.  
 Զինը քուրանց տուն եկաւ.

Հետն եօթն աղուոր նաժիշտներ,  
Եւ ոսկեքել՝ իր հալաւ :

\* \* \*

Խորհուրդին տակ վառ մոմերուն եւ լուսնին,  
Երբ սրինգ մ'ալ հին սիրերգը կ'արտասուէր  
Զոյգ մը անբախտ սէրերուն,  
Եւ շատրուանն իր ջուրերը գուռին մէջ՝  
Լացի մը պէս՝ կը քափէր,  
Զիննն նայուածքն հանդիպեցաւ վրէնի  
Խորհրդամոլ աչքերուն .  
Եւ ամէն մէկ իր պատկերն միւսի հոգոյն մէջ գտաւ՝  
Սպասումէն տառապած :

Ու երկուքն ա՛լ զգացին որ ծանօթներ են վաղուց,  
Եւ երկուորեակ հոգիներ,  
Միակ կեանքով մը ապրելու սահմանուած,  
Եւ մէկ մահով մեռնելով . . . .

\* \* \*

Զին գո՛ւռն էր եկեր կարմիր սանդալով,  
Երբ դեռ լացի պէս՝ շաղը կը մաղուէր .  
Զին դուրս էր ելեր առտուան բալով,  
Երբ դեռ ո՛չ օր էր եւ ո՛չ ալ՝ գիշեր :

Թուխ մազն իր խուրճ-խուրճ քափեր էր ուսին,  
Բուստի կղզոյն դէմ խուժող ծովին պէս .  
Գէմքն իր՝ խորհուրդն էր մութին ու լոյսին,  
Իր մազն էր գիշերն ու այգն՝ իր երես :



Վրէնն ալ գուռին եգերֆն էր նստեր,  
Զարնուած ֆարայծին արձանին դիմաց,  
Որ իր արիւնոզ վերֆը կը լզէր,  
Աչքերն իր փախչող եղնիկին յառած:

\* \* \*

—Ա՛յս ո՞վ է կուգայ այգին պէս պայծառ,  
Երազի նամբէն՝ հրեղէն քեւով.

—Զի՛նն է, որ կուգայ՝ ածունեքն ի վար  
Բացուած կոկոններն օծելու մեղրով:

—Դո՛ւն գեղեցի՛կ ես, իշխանի աղջի՛կ,  
Լուսնի տակ բացուող ջրշուշանին պէս:

—Դո՛ւն վեհափա՛ռ ես, Տարօնի արծուի՛կ,  
Սասնոյ սարերու արֆայ արծուին պէս.

—Զի՛ն, ֆաղցր ձայնիդ միակ խազին մէջ,  
Հոգիիս ամբողջ երգերն ունիս դո՛ւն:

—Վրէ՛ն, հասակիդ աշտարակին մէջ՝  
Հոգիիս ամբո՛ղջ գանձերն ունիս դո՛ւն...:

\* \* \*

Վրէնը որսէն ետ դարձաւ,  
Իր գոյգ որսկան շահէններուն հետ մէկտեղ.  
Խոցուած եղնիկ մը նուազուն աչքերով,  
Եւ լեզուն կախ՝ ձիուն վրայ կը կենար:

Եւ վայրի բաղ մը՝ թեւերէն զարնուած՝  
Խօլ թռիչքի մը տենչանձովն յուսահատ՝  
Վայրի աչքերն էր փակեր լնակներու երազէն:

Զոյգ մը սինամ կախաներ՝  
Կարմիր ոտով եւ վարդագեղ կտուցով՝  
(Տոտիկներով կարծես արիւն են կոխեր,  
Եւ կտուցով վերքի վրայ լոկ սնե՛ր)  
Իրարու դէմ կը կուային սիրերգ մը՝  
Մինակ ծանօթ իրենց եւ չորս հովերուն:

\* \* \*

—Իջան շուքեր բարտիներուն  
Պատերն ի վար դղեակին.  
Իջաւ հօտը ժիր ուլերուն՝  
Կանաչ քամբէն բլրակին:

Կտրին վրէնս, այգին եկո՛ւր,  
Հաւքերուն պէս, ջուրին պէս.  
Շուրթիս գինին ըմպել եկո՛ւր,  
Խոնջ ու ծարաւ ուլին պէս:

Եօթը փարչով նո՛ւթ եմ քամեր,  
Քեզ իմ գինին հոսելո՛ւ.  
Քառասուն թուփէն վա՛րդ եմ քաղեր՝  
Քեզ իմ պսակն հիւսելու:

Մութը չ'իջած, այգին եկո՛ւր,  
Սոխակներու երգին հետ.  
Անտուն տղա՛յ, ինծի եկո՛ւր,  
Վարդ ու նուռի բոյրին հետ:

Լուսնակն՝ ոսկի կանքեղի պէս կը քափէ՛ր  
Իր լոյս՝ դալար բարտիներու ոստն ի վար,  
Եւ լնակին մէջ, որ սատա՛փ էր կտրեր,  
Աւե՛լի վառ ոսկի լուսնակ մ՛էր փքքեր·  
Ու սխական ալ սիրավէպ մը կը կարդար:

Վրէնն ու Զին, ծղրիթներու երգին հետ՝  
Ածուներէն լնակին ափը հասան·  
Երբ հոյլ ի հոյլ ջրշուշաններն բաժակնին՝  
Աստղերու պէս՝ բացեր էին ջուրի վրան·  
Եւ նոր երկինք մ՛էր լինը տակն երկինքին:  
—Վրէնն ու Զին լնակին ափը կեցան...:

\* \* \*

Ո՛ր Զին, նատէինք այսպէ՛ս քեզի հետ,  
Քաղցր վիշտի մէջ եւ հեշտ մոռացման·  
Շունչիս մէջ լեցուէր շունչըդ խնկաւէտ,  
Գողթան վէպերու նոյս գանձին նման:

Ա՛լ թող արշալոյսն հիւծէր մեր բոլոր  
Խուլ նախանձի մէջ եւ լո՛ւռ հիացմա՛ն·  
Զրցայտը ցամփէր, երգն իր մշտոլոր՝  
Ուռիներուն տակ լռէ՛ր յաւիտեան:

Անվերջ ճմբան մէջ պարտէզը չորնար,  
Վառ յոյսերուն պէս մեռնէին վարդեր·  
Ու արար-աշխարհ անապա՛տ դառնար·  
Կսկիծէն հիւա՛նդ՝ արեւը հասնէր...:

Եւ մեծ սուգին պէս սեւ գիշերը գար·  
Լուսնակն ալ մաշած՝ չֆանա՛ր անհետ·

Մէյ-մէկ քափէին աստղերն անհամար.  
Լոկ մե՛նք մնայինք մեծ գիշերին հետ:

Ու դեռ իմ նակտիս քու շունչըդ հեւա՛ր,  
Ես ա՛լ մեծ սէրըս պատմեցէի քեզ,  
Եւ իր տաղերու դիւքանքն անհնար,  
Հագար ծովերու անգիր երգին պէս:

Եւ մեր մէջ միակ սիրտ մը տրոփէր,  
Ու մենք *Եսն* ու *դուն* մոռնայինք այնքա՛ն,  
Որ միակ ձեւ մը գմեզ ամփոփէր.  
Այսպէ՛ս ապրէինք յաւէտ, սիրակա՛ն...:



Սիրավէպը քաջ ասպետին ու Ջինին՝  
 Բարուարին մէջ՝ արձագանգեց շուրթէ շուրթ .  
 Ջայն երգեցին ասպետները իրարու՝  
 Որս ու խաղի միջոցին :

Տոհմիկ կոյսերն ան մէկմէկու մնջեցին  
 Բաղնիքին մէջ եւ ժամ գացած ատենին :

Ու կիները, կտուրներու շուքն ի վար՝  
 Իրենց իլիկ մանելով,  
 Անոր քառսուն նոր դրուագներ հիւսեցին :

Մշակները՝ այգիին մէջ ու դաշտին՝  
 Ջայն խառնեցին վաստակի շէն երգերնուն :

Եւ ամէ՛ն ոք սէրն այդ գոյգ մը սիրտերուն՝  
 Այնչա՛փ յարմար էր գտեր,  
 Որչա՛փ պատշան են կոպն ու աչքն իրարու . . . :

Իսկ Բակուրին սիրտը քոյնով էր լեցուեր  
 Եւ անսահման նախանձով :

— Դժբախտ սէրը մատուռ մըն է մենաւոր,  
 Որուն շուրջը գերեզմաններն են տխուր՝  
 Բոլոր անոնց, որ խենթօրէն սիրեցին,  
 Բայց իրենց դէմ մարմար սիրտը լոկ գտան՝

Կունէ ազուոր սրբուհիին անտարբեր,  
Որ խորանին սրբարանէն էր ժպտեր...  
Որդի մը պէս Զինին ոտքը սողացի,

«Ստրո՛ւկդ ըլլամ, դուռիդ վարձկայն հնագանդ.  
Գրո՛տ բառ մը, սիրտս սէրէդ կը ֆանդուի՛.  
Սանդա՛լդ ըլլամ, վրաս ֆալես նուրբ ոտքովդ,  
Կամ գուռիդ ֆարն ,որուն վրայ կը կոխես  
Երբ մարմինդ ջուրերուն ծոց կը բանաս,  
Լուսածղօտ ջրշուշանին հանգունակ.  
Զի՛ն, շնո՛րհի մը սա՛ գերիիդ». մնջեցի:

Ան վեր կեցաւ, իր գայրոյքէն իսկ ազուոր,  
Տիրմօր պէս անհպելի ու հօօր,  
«Բակո՛ւր, ըսաւ, մէջդ կիրքն է կը խօսի...»:

Եւ այսօր նոյն պատկառելի սրբուհին,  
Սիրտն է գողցեր քու սիրական Արտակին.  
Զքեզ կապտած անոր սէրէն բարեբախտ,  
Ու խորտակած իմ երագներս ապագայ:  
Ըսաւ Բակուր՝ Նուարդին  
Երբ օրերու անոր արցունքն էր տեսեր:

—Ճամբուն վրայ, որ մեզ փառքին կը տանի,  
Անոնք մա՛հն են ու մեր փառքը միանգամ.  
Բայց ֆանի՛ որ մեր փառքն ըլլալ կը մերժեն,  
Թո՛ղ մահն ըլլան, բայց մա՛հն իրենց իսկ անձին:

\* \* \*

Տրտում Տիրամօր մաքուր լացին տակ,  
Զին եօթը ներմակ մոմեր էր վառեր.

Իր՝ սիրտն իբրեւ խունկ, վրէնի սէր՝ կրակ՝  
լացող Տիրամօր առջին էր ծխեր:

Եւ սպասեր էր, մինչեւ վերջին մտ  
լացովն էր օծեր իր ոսկի մոմկալ.  
Ու իր ցաւին խո՛ւլ՝ պատկերին տակ, հո՛ն,  
Մեծ կոյսին նման լացեր էր ինքն ալ:

Վրէնն ալ ներմակ իր գառն էր բերեր՝  
Մատաղ ընելու Սուրբ Կարապետին,  
Որ իր մանկութեան օրերէն ի վեր  
Շնորհիք էր տուեր եւ ոյժ իր բազկին:

Եւ, հո՛ն, սիւնին ոտքն, իր Զինն էր տեսեր՝  
Տիրամօր դիմաց եւ շէջ մոմերուն.  
Եւ Մշոյ սուրբին ան հարց էր տուեր՝  
Թէ ո՛րն էր ամբիժն երկու կոյսերուն...:

\* \* \*

Փորձիչի պէս՝ վարագդատի ականջին  
Բակուրն այսպէս խօսեցաւ.  
—Ո՛վ Մոկաց տան պայագատ,  
Երակներուն մէջ քու ցեղիդ մեծագոր՝  
Դե՛ռ անձանօթ, ոամիկ արիւն չէ՛ հոսեր:

Ոչ ալ ազնիւ արիւնն տունիդ հնաւանդ  
Երբէ՛ք խառնուեր է արիւնին հասարակ:

Հին վէպերու ակնադրիւրին ջուրին պէս՝  
Ան իր շինած կախարդ առուէն է հոսեր՝

Ոսկեծաղկի եւ՛ լուտասի անկողնէն,  
Եւ կարկաչեր իր իսկ դիւթիչ վագֆին մէջ:

Ինչպէ՛ս կրնաս իշխանուհին՝ ֆու իսկ ֆոյր,  
Որ ֆու ցեղէդ շուշանի պէս է փթթեր,  
Քմայֆին հետ կապել մարդու մը անյայտ.  
Փո՛յթ չէ որչա՛փ ալ ֆաջ ըլլայ ու անձնեայ:

Եւ վարագդատն ցեղին արեամբն երդուընցաւ,  
Թէ մահէն զատ ո՛չ մէկ կապ,  
Պիտի իր ֆոյր միացնէր Արտակին:

\* \* \*

Հագար հոգի դահլինին մէջ ժողուեցան.  
Մէկ վայրկեանի մէջ, կարծես,  
Մեծ իշխանին մէկ ակնարկէն գոյացած,  
Եւ մերկ սուրով՝ առաջացան դէպի վրէն,  
Որ նենգօրէն իշխանին հիւր էր կանչուած:

Ան իր կոնակ պատին տուաւ տիրաբար.  
Եւ կողէն դուրս ֆաշած թուր մը շանթարձակ՝  
—Մինչեւ որ սա՛ կուտրի պողպատ ձեռֆիս մէջ  
Եօ՛քը հարիւր սիրտեր պիտի մահանան—  
Կանչեց վրէնը. եւ թուրը այդ պսպղուն՝  
Սպառնագին եկողներուն դէմ ունեց. .  
Եւ գինուորներն երկիւղէն դիրֆերնուն մէջ ֆարացան:

Իսկ վարագդատ իշխանն անոնց կը կանչէր.  
—Իմ կտրիննե՛րս, իմ առիւծներս ձե՛զ տեսնեմ,  
Այդ շփացած բախտախնդիր կապեցէֆ



Եօթը ժանգոտ շղթաներովը ամուր:  
Ինչ... կը վախնա՞ք. է՛յ, ամօ՞ք ձեզ, վախկոտներ,  
Ամօ՞ք, երկչոտ նապաստակի դուր ձագեր.—

Ու հագարը նորէն առաջ խոյացան:  
Վրէնը՝ պատին կռնակ տուած՝ տիրաբար՝  
Եկողները կը դիտէր... Երբ ներս մտաւ Մեհունդակ  
Խոցուած հապէշ առիւծին պէս կատա՛ղի:  
Եւ լիաթոք որոտաց.

—Գիտէ՞ք որուն դէմ ձեր սուրը կը ճօնէք,  
Անո՛ր, որ քաջն է բովանդակ քաջերուն,  
Եւ սիրտիս դէմ մանաւանդ:


Ե՛տ, ձեր եկած նամբան նորէն բռնեցէք,  
Թէ ձեր կեանքեր բա՛ն մը կ'արժեն ձեզ համար.  
Դո՛ւք ամէնիդ ալ քշուառական ստրուկներ,  
Փախի նամբան բռնեցէք:

Ու հագարը մէկ մարդու պէս դուրս փախան,  
Եւ մինչեւ օրս կը փախչին:

\* \* \*

Ո՛ւ այգ շաղուած երագէ,  
Ա՛լ աղբիւրին ափը չես գար ծագելու  
Սիրանոյշի քու տեսիլներդ լուսավառ՝  
Սիրահարին, որ սրտատրոփ կ'սպասէ  
Անոր, որ քու նախաշողիդ հետ կուգար  
Ջուրերուն դէմ ժպտելու:

Կարօտէն գո՛ւոն է ցամփեր.  
Եւ ա՛լ կարմիր սանդալներն չեն բերեր .  
Շնորհալի անոր քայլերն եղնիկի  
Սալարկներու կունիսն վրայ հնչելու .  
Վա՛րդն է հակեր նամբուն վրայ մոռցուած,  
Եւ տարփագին կը համբուրէ հոն քափուած  
Հետքերն անոր սանդալին . . .



Տոփիւնը գոռ՝ կայծակնավագ ձիերուն  
 Փողոցներուն մէջ կ'որոտար առտուանց,  
 Երբ ասպետներն ու քաջերը Բարուարի՝  
 վարագդատին շուրջ խմբուած՝  
 Դէպի սարեր կը դիմէին որսալու :

Եւ ի՛նչ ուժգին կը հնչէր վրէնի հպարտ կուրծքին  
 տակ՝

Կախարդանքը ամպածրար լեռներուն,  
 Երկշոտ վագքը եղնիկներուն աշագեղ,  
 Եւ սարսուզին ու տենդոտ հետապնդումն որսորդին :

Բայց այս անգամ իր ձին անժոյժ, բաշագեղ՝  
 Ախոռին մէջ պիտի տխուր վրնջէր՝  
 Անհուն կարօտն մրրկարշաւ վագքերուն .  
 Իսկ ինքն իր վէրքը բռնած՝  
 Պիտի տանէր Զինին առջեւ բանալու :

Ինկեր էին արդէն շուքեր կէսօրի  
 Հոսանքն ի վար ջուրերուն,  
 Երբոր վրէնը պարտէզն իջաւ իշխանին,  
 Ուր Զինն իրեն կարօտավառ կ'սպասէր,  
 Դալարագեղ նուռիին տակը նստած տրտմագին :

Վրէնը ամուր իր գիրկին մէջ սեղմելով՝  
 Զմեռին մութ գիշերի մը պէս հեծեց .

—Ո՛վ վարուժանըդ՝ անարատ իմ սէրին,  
Մօրըս շիրմին մարմարին պէս գունա՛տ ես...

Իսկ վրէն յարեց լալագին.—

—Ո՛վ հրեղէն տատրակդ անմեռ իմ սէրին,  
Դո՛ւն աշունի երկինքին պէս թախծոտ ե՛ս...

Ու ֆարացած իրարու գիրկ մնացին՝  
Գլուխ գլխի՝ ինչպէս գոյգ մը աղաւնի:

Նուռին անուշ իր ստուերովը խնկեց  
Այդ պատկերը լուսածին.  
Լուսնակն կաթէ իր մագերովը օծեց  
Այդ երազը հրանոյշ.  
Հագար աստղերն իրենց երազն հոսեցին  
Ծոցն այդ աղուոր ֆերթուածին.  
Եւ ջուրերը խորհրդամոլ երգեցին  
Անոր դիւթանքը հօգ՛ր:

Այսպէ՛ս թռան երեք ցերեկ ու գիշեր  
Ինչպէս մութին՝ երդէդ անցնող փոսուռայ:

Յանկարծ դուռը պարտէզին շոնդալից բացուեցաւ,  
Եւ որսկաններն ներս խուժեցին աղմկոտ:  
Վրէնը շփոթ՝ իր արային տակը ծածկեց սիրուհին՝  
Եկուորներու տեսութենէն պահելու:

Զուարթ խուժքը ծառերուն տակ կազդուրուելու  
նստեցաւ.  
Եւ փրփրագեղ շարքաթը՝

Եօթն անգամ եօթն անմահական ծաղիկներէ պատ-  
րաստուած,  
Բաժակներու ոսկիէն հոսիլ եկաւ լիօրէն:

Վրէնին քով, քաջ Մեհունդակն էր նստեր,  
Ու կը պատմէր դրուագներէն մեծ որսին.  
Թէ քարայծը ինչպէս ձեռքէն էր փախեր,  
Իր մէկ նետէն վիրաւոր.  
Եւ կաթկթած անոր արեան հետքերուն,  
Որ ժայռէ ժայռ փքքեր էին վարդի պէս,  
Ինք չէր կրցեր հետեւիլ.  
Որովհետեւ ժայռերն ի վար անդունդներ՝  
Կը բացուէին սարսափին մէջ եւ մութին:  
Թէ՛ վիրաւոր հսկայ վարագ մը ինչպէս  
Փոքն էր պատուեր որսկանին:

Ոսկեքասով ափսէն երբոր փրփրալէն  
Անոնց առջին հոսեց գոյնն իր արիւնի,  
Վրէն վեր առաւ ծայրն արային նկարէն  
—Տակը հեղեղ կ'ուռէր փարքամ մագերու:  
Եւ Մեհունդակն հասկցաւ  
Որ արիւնի վայրագ մրրիկը մօտ է՛ր.  
Եւ աննկատ՝ նամբան բռնեց դղեակին:

\* \* \*

Վարժ սրինգ մը դափին հետ  
Կը ցնծերգէր քրախաղին պարերգը.  
Ու գոյգ մը կիրթ ասպետներ՝  
Մերկ թուրերով կը պարէին դէմ առ դէմ  
Հայ քաջերուն սիրած այդ պարն ինքնատիպ:

Կու՛մբ մը աղջիկ, մէկ՝ տղայ  
Սա՛ պարերգը կը կանչէին փոխն ի փոխ .

—Եօթն աշխարհ չափած քեզ կուգամ, ո՛վ կոյս,  
Գեղոյդ եւ սէրիդ ես խոնջ ուխտաւոր .  
Քեզ գա՛նձ եմ բերեր, գոհար ու սնդուս,  
Եկո՛ւր, հարս եղի՛ր ինձ, աղջիկ աղուո՛ր :

Ա՛յ, դո՛ւ հայ կուսա՛ն,  
Հրեղէն ջրշուշա՛ն :

—Զին ու Մաչինէն եկող մեծատո՛ւն,  
Հո՛ւ սէր չեն ծախեր վէպ ու ակունքով .  
Կեռ քուրըդ հանէ՛, եւ քաջի պէս դուն,  
Արիւնի նամբէն՝ հպա՛րտ ե՛կ իմ քով :

Ա՛յ, հարուստ տղայ,  
Ա՛յ, փափուկ տղա՛յ :

—Պալատս եմ պարպեր ու քեզի կուգամ,  
Ես հօր արքան եօթը ծովերուն .  
Քե՛զ փա՛նք եմ բերեր ու քագեր փարթամ,  
Եկո՛ւր, հարս եղի՛ր ինձ, աղջիկ սիրուն :

Ա՛յ, նագան աղջիկ,  
Միամօր եղնի՛կ :

—Փառքն ու քագ քե՛զի, ծովերու արքա՛յ .  
Ես մատաղ կ'ըլլամ այն պարգուկ քաջին,  
Որ կեանքն ուրացած անյոյս կռուին գայ .  
Եւ սէրիս տիրէ ուժովն իր բազկին :

Ա՛յ, սեւ ձիաւո՛ր,  
Փարթամ քագաւո՛ր :

—Քեզ պաշտող եօթը ասպետներն ինկան  
Հգօր քափին տակ սա՛ կարշնեղ բազկին.  
Ո՛չ գանձ ունիմ ես, ո՛չ բերդ ու մական.  
Աղջի՛կ, քաջ տղուն կուզե՞ս ըլլալ կին:  
Սիրտիս քագո՛ւհի,  
Ա՛յ, քաջ Հայո՛ւհի:

—Վահան հետըդ ա՛ն եւ ձեռքիդ մէջ՝ քո՛ւր,  
Ինձ հետ կուուի ե՛լ, ա՛յ, ասպետ տղայ.  
Կուզե՛մ քաջի պէս ըլլալ անձնատուր  
Որ սէրըս յաւէտ քու գե՛րին մնայ:  
Ա՛յ, սիրուն տղա՛յ,  
Իմ կտրին փեսա՛յ...:

\* \* \*

Վերջին անգամ, Գոհարին հետ, Մեհունդակ՝  
Նուռիներու երագանքին մէջ քաղուած  
Իր հայաշէն ապարանքին նայեցաւ.  
Ինչպէս մեռնող մեր յոյսերուն կը նայինք,  
Արդէն գիտակ անոնց տրտում վախճանին,  
Եւ կրակի տուաւ գայն.  
Իր քաղաքներն իր իսկ ձեռքով հրդեհող՝  
Հալածակն զօրքին պէս:

Յետոյ նիրհող գաւկին օրքանը գրկած,  
Խենթի նման՝ Գոհարին հետ՝ դուրս վազեց  
«Հրդե՛հ-հրդե՛հ» պոռալով.  
Որպէսզի հո՛ն, իշխանին տուն հաւաքուած  
Ասպետներն այդ հրդեհին մարել փութային,  
Ու մտերիմն իրեն՝ Վրէն չը մղուէր  
Զինին սէրը արիւններու մէջ լուալ:

Հագար բոցերն ամեհի՝  
Վայրկեանին մէջ պաշարեցին խօլաբար՝  
Պալատը այդ գեղակերտ:

Չորս սիւնագարդ պատշգամի ծոցին մէջ՝  
Վերջին անգամ՝ իրենց գինին քափեցին,  
Եօթը ծովէ ու եօթն երկրէ փնտռուած  
Ծաղիկները հագուագիւտ:

Մնձուր դարձան սենեակի արդուգարդերը փարթամ.  
Եւ անօթները ոսկեձոյլ ու արծաթ՝  
Փայլուն գետի մը փոխուած՝  
Այդ մոլեգնող բոցերն ի վար հոսեցան:

Ու հոն կուտուող ամբոխը լո՛ւռ, երկիւղած.  
Անկարեկիր երկինքն ի վեր կ'ազօթէր.  
—Ո՛վ արդար տէ՛ր, վերջը բարին կամենա՛ւ:

Հրդեհին մէջ ջուրի գետ մը կը հոսէր,  
Ու հոժ շոգին բոցերուն հետ խառնուած,  
Կը գալարուէր ինչպէս վիշապ մը հրեղէն:

Եւ աղաղակ մը քաղէ քաղ կը շրջէր  
—Հրդե՛հ, հրդե՛հ, օգնութի՛ւն...  
Ու ահագանգ կը հեւար  
Ամէն ժամու զանգատունի բարձունքէն:

Բօթը հասաւ մինչեւ պալատն իշխանին  
Ու պարտէզը ուր դեռ պարը կը դառնար,  
Իշխանին հետ ամէն մարդ դուրս նետուեցաւ օգնու-  
թեան:



Երբոր վրէն պարտէզը  
Խարուած սիրտի մը պէս գտաւ ամայի,  
Ոտքի ելաւ իր հասակի բոլոր շուֆովը կախարդ,  
Եւ լիաքոֆ շնչելով  
Նոան բոյրէն ծանրաբեռն օդը մաքուր,  
Զինին այսպէ՛ս խօսեցաւ .

—Ո՛վ արայիս տակ դողահար կծկտած՝  
Սինամ կաֆաւըս աղուոր,  
Քրոջդ տունը լափող բոցերն ամեհի՝  
Մեր սէրն արեան մէջ լողալէ փրկեցին:

Վանդակիդ մէջ փակուելու քոի՛ր,  
Ո՛վ տատրակս անտուն,  
Իսկ ես պատկերդ ու տրտմութիւնդ գրկած՝  
Մենութեանս մէջ սէրի երգերս հիւսեմ . . .  
Եւ հեռացաւ հոգին տանջուած ու խոցոտ:

Ու ծառի մը ստուերին տակ աննշմար՝  
Բակուրն անոնց հանդիսատես էր եղած .  
Յովագին պէս, որ քաւուտքի մը խորէն՝  
Կ'սպասէ գոյգ մը սիրահար եղնիկի,  
Որ պիտի գան դիւքանքն իրենց աչքերուն,  
Ակնադրիւրի մը սիրերգին մէջ քափել:  
Ու ամէն բան վարագդատին պատմած էր:

\* \* \*

Ատեն մը ետք, նենգ Բակուրին խորհուրդով,  
Իշխանն իրեն դեսպան կարգեց Մեհուդակ՝  
Բագրատունեաց մեծ ու հօր արքային .

Եւ մեծ փառքով դէպի Անի դրկեց գայն՝  
Ընծաներով հագուագիւտ,  
Եւ քառասուն հեծեալներով զինավառ:



Սրահին մէջ նստեր էին սեպուհներն,  
 ու ընտրեալներն բոլոր Մոկաց ֆաջերուն,  
 եւ պալատին խորհրդական Բակուրը:

Փարթամ հալան ու մագերը հիւրերուն  
 Օծելէ ետք անուշահոտ իւղերով,  
 ճաշի սեղան դրուեցաւ՝  
 Փքքուն վարդով եւ եօթնամեայ գինիով:

Զորս անկիւնէն սրահին՝  
 Արաք խունկին ծուխի գուղձերն հոտեւան՝  
 Հիւրերուն շուրջ ամպերու պէս կախուեցան:  
 Եւ փարչերէն բաժակներուն մէջ ոսկի՝  
 Ծովերուն պէս գինին փրփրիլ սկսաւ.  
 Իր վտանգին ու խօլական ք-մբիբին  
 Ամէնքն ըրած անձնատուր:

Ճաշէն ետքը, երբ, ալ կարգն էր խաղերուն,  
 Իշխան՝ Վրէնին դառնալով՝  
 —Ասպետ, ըսաւ, նարտի վարպետն ես կ'ըսեն,  
 (Ինչպէս ոյժի եւ ֆաջութեան մէջ ո՛չ ոք  
 Կրնայ երբէք հասնիլ քեզ)  
 Ու քէ կեանքիդ գինովն անգամ կը խաղաս  
 Հետըդ մրցող ասպետին:

Ա՛րդ, Զին ֆուկըդ պիտի ըլլայ, ա՛յս օր իսկ,  
 Թէ եօթն անգամ յաղթես զիս.

Իսկ թէ յաղթուիս, գերիս պիտի ըլլաս դուն,  
Եւ ես տէրը կեանքիդ ու տէ՛ր՝ քու մահիդ:  
Ահա՛ հրաւերս քեզի, եթէ ասպե՛տ ես...

—Տէ՛ր, այդ գինը, որ իմ կեանքիս կը դնես,  
Հազար կեանքովս եթէ նոյն իսկ վնարեմ,  
Շահողը ե՛ս եմ նորէն:

Որովհետեւ ա՛լ կեանքս ստուեր մ'է յոգնած,  
Որ գահավէժն ի վար պիտի չճանայ  
Երբ յոյսըս ալ արեւին պէս նուա՛ղի:

Եւ մանուկ մը բերաւ տուփը երեւոս,  
Վրան փորուած «ասպրիմ—չ'ասպրիմ» եւ լուտաս,  
Ու Սէյլանի սատափով ներսը բանուած,  
Եւ փղոսկրէ սեղանին վրայ դրաւ գայն:

Ու ասպետներն, որ մահին դէմն իսկ ժպտով  
Կեցած էին կռիւներուն մէջ բազում,  
Հիմա գունա՛տ կը դիտէին այդ խաղը,  
Որ իր հանդարտ եւ անարիւն ձեւին տակ՝  
Կռիւներուն է՛ն անյոյսը կը պարտկէր.  
Երեք անգամ խաղ շահողը վրէճն էր:  
Իսկ իշխանը՝ համակ զղջում եւ գայրոյթ՝  
Իր մատները կը խածնէր:

—Ինձ կը թուի յուռութ մը կայ թագնուած  
Աթոռին տակ կամ բարձին վրայ Արտակին,  
Խաղն յուռութով շահիլն քաջին չէ՛ վայել,  
Ըսաւ Բակուրն որ դաւադիրն էր խաղին,  
Երբ տեսաւ Զին շատրուանին քով կայնած.

Վրէնն իր աթոռ վարագդատին հրամցուց,  
Եւ անոր տեղն ինքն առաւ  
Բակը նայող պատուհանին յանդիման:

Զինն էր կայնած վարդաստանի գուռին քով,  
Եւ արեւին համար լացող այգին պէս՝  
Շուշաններու բաժակին մէջ թախծագեղ  
Վերքն իր պո՛ւտ պո՛ւտ կը փամէր:

Զոյգ մը կարապ, ջրշուշաններն ու լուտաս  
Լնափի մը երագանքին մէջ լքած,  
Բերեր էին իրենց վիզերն անարատ՝  
Անոր գթոտ շոյանքին:

Եւ սիրամարգ մը, աչագեղ իր ագին՝  
Զինի դիմաց ծիածանի պէս բացած,  
Հագար աչքով դեռ այն վիշտը կ'արտասուէր,  
Որ Հերմէսի կախարդ սրինգն էր երգած:

Այրի սոխակ մ', այտերն անոր վարդ կարծած,  
Շնորհալի ուսին վրայ էր թառեր.  
Եւ կարօտէն ու պաշտումէն դողդոջուն՝  
Հին մեղեդի մը կ'երգէր:

Ու կը նայէր Զին նայուածքով մը մոլար,  
Ծիծաղներու, ամէ՛ն բանի անտարբէ՛ր,

Ինչպէս լուսնակն լինին վրայ կը նայի՝  
Բոլորովին անգէտ անոր հմայֆին:

Յանկարծ նայուածքն իր տրտում՝  
Վրէնի կարօտ աչքերուն մէջ սուգեցաւ,  
Ու ա՛լ մոռցաւ ան ամէն բան, իր անձն իսկ,  
Այդ նայուածքի վիհին մէջ:  
Ու եօթն անգամ իշխան յաղթած էր վրէնին:



—Ասպե՛տ, ըսաւ, իշխանը սէգ վրէնին,  
 Լսէ՛ ինծի, վա՛յ մի դիգեր քու գլխուն,  
 Սեւ մի՛ բերեր քու պարմանի արեուն:

Ճոպկէ՛ սիրտէդ Զինին սէրը յուսահատ,  
 Ինչպէս քունեդ նետ մը վերֆէն կը հանեն.  
 Ու բժշկուած կեանքդ ապրէ՛ լոյսին տակ,  
 Ստուերիդ պէս՝ փառքն ետեւէդ քաշելով:

Պիտի ներեմ յանդգնութիւնդ ես քեզի,  
 Ու նախատինքն, որ խենթ սէրովդ հասցուցիր  
 Մոկաց տունին. ու կեանքդ պիտի քե՛զ քաշխեմ,  
 Ու բանակիս տէրը պիտի կարգեմ քեզ,  
 Թէ որ Զինին դուն քու սէրըդ ուրանա՛ս:

—Իմ կեանքն է Զին, ու քէ հանեմ գայն սիրտէս,  
 Պարապն անոր մահն պիտի գայ լեցնել.  
 Զինով ամուր եմ ես վանայ բերդին պէս,  
 Առանց անոր՝ կամքդ ոյժ չ'ունի իմ վրաս.  
 Կրնա՞ս մեռելն անգամ մըն ալ մեռցնել...

Եւ իշխանը վնոեց՝ շուքը յամբ մահին՝  
 վրէն ու Զինի սէրին միջեւ տարածել:

\* \* \*

Անբախտ Զինի ապարանքին պատին տակ,  
 Ճամբուն եզերք, ջրհոր մը կար մոռցուած.

Յամբած էր ան, ինչպէս կոյր աչք մը՝ լոյսէն.  
Ու ահաւոր գաղտնիքով մը պատանձուած,  
Իր լա՛յն երախն ան բացեր էր լոյսին դէմ,  
Ու լոյսին մէջ աւե՛լի սեւ էր դարձած:

Այս չարաշուք ու գէն հորի մութին մէջ,  
Հո՛ն, նետեցին սիրող ասպետը բարի.  
Եւ ահաւոր ժայռ մը դրին իր վրան,  
Փրկչին դամբան գոցող հսկայ վեմին պէս:

Ամէ՛ն առտու, ազատ պառաւ մը գթոտ,  
Օքեկ հաց մը իր արցունքէն քրջելով,  
Ու մաղթելով որ մեղրն ու կաթն ու գինին,  
Բարին Աստուածը՝ չոր հացին մէջ գեղու,  
Ուխտաւորի մը պէս լո՛ւռ ու երկիրդած՝  
Կ'առաջանար դէպի հոր.  
Ու գայն գոցող հսկայ ժայռին մէկ նեղքէն՝  
Արցունքին հետ վար կը նետէր չոր հացը.  
Ու յորդ լացը իր սիրտին մէջ կուտելով,  
Տո՛ւն կը փութար պառաւի սեւ արցունքին  
Իր ազատ վագֆը տալու:

Ծաղիկները թաղարներուն մէջ լացին,  
Եւ այգին դէմ սարսուռներով քօշնեցան:  
Ու վանդակի թռչունները փաղցրաձայն  
Սուգի երգով վանդակներուն մէջ մեռա՛ն:

Վարագոյրին մետաքսահիւս, ոսկեքել՝  
Սարդն իր ոստայն դրստ անհոգ ու ազատ.  
Բայց սգաւոր Զին սենեակէն վար չ'իջաւ.



Եւ ո՛չ իսկ մէ՛կ անձի ներեց վրդովել,  
իբ մեծ վիշտին պատարագ . . . :

Սեւ գիշե՛ր մը, իբ հեգ սիրտին պէս սեւաւոր,  
իբ կաթ իրան սեւ ֆողի մը մէջ փաթթած,  
Զին միայնակ սեւ հորին ֆով հասաւ ծածուկ.  
Եւ ձայնով մը՝ վիշտէն ու մեծ վախէն դողող՝  
Ժայռին բացուած ֆն ի վար կանչեց.

—Անբախտ վրէ՛նս, ըսէ՛, հոգեա՛կ,  
Դեռ մութին մէջ կանաչ արեւդ կը փա՞յլի:

—Ի՛նչ մեղեդի է գուբին մէջ կը ծաւա՛լի.  
Զինին ձ՞այնն է այս որ հոգւոյս մէջ կը յորդի . . .

—Ա՛յս, տանջանֆիդ ես մեռնէի, իմ սիրակա՛ն,  
Այս մութիւն մէջ ինչպէ՛ս կ'ապրիս, ըսէ՛ ինծի . . .

—Ժայռին նեղ ֆէն երբեմն նիհար շողն արեւին  
Աչքերուս մէջ կ'իյնայ յանկարծ, ո՛ր ֆաղցր Զին.  
Մե՛րթ ալ ա՛ստղ մը, լուսնի ծուէն մը կը նային  
Պատկերիդ ոտք երկրպագող իմ հոգիին.  
Եւ գորովէն եւ լուռ գութէն կը նուաղին:

Մթութեան մէջ լոյսն աւե՛լի է սրբազան,  
Ու ֆու սէրըդ այս մութին մէջ լոյսն է աչքիս.  
Անով կապտուած ո՛չ օր գիտեմ, ո՛չ ալ գիշե՛ր.  
Այս գութին մէջ ֆո՛ւ անունովդ կապրիմ, իմ սէ՛ր . . .

—Ըսէ՛, հոգեա՛կ, միթէ՛ սիրտդ կարօտ չ'ունի՛,  
Սէրէս ի գատ, աշխարհ թովֆ մը չ'ունի՞ ֆեզի . . .

—Երբ ա՛յս նկուղս կ'աղմկոտի նամբէն անցնող  
Նժոյգներու ժիր ու հպարտ տոփիւններէն,  
Կարծես ամէ՛ն պայտ ու սմբակ՝ գանկս փշրած՝  
Անգթօ՛րէն ուղեղիս մէջ կը մխրնուին.  
Ու Յոլակիս յիշատակով սիրտս կը մխա՛յ:  
Ներէ, ո՛ր Զին, իսօլ վագֆերու կարօ՛տն ունիմ...

Երբոր մեռնիմ՝ նժոյգս իմ քով քաղեցէ՛ք,  
Առանց քամբի եւ ո՛չ իսկ սանձ բերնին մէջ.  
Կամար վիզը բազկիս այնքա՛ն մօտ դրէ՛ք,  
Որ փոքորկած բաշն ունենամ արիս մէջ...

Ասպետի սուրս աջ ձեռքիս մէջ քո՛ղ զգամ,  
Մե՛րկ ու անբիծ՝ իմ տարաբախտ սէրիս պէս.  
Ու կուրծքիս դէմ քո՛ղ փայլփլի իմ վահան,  
Գիշերին դէմ ժպտող բարի լուսնին պէս:

Փառքի օրերս քո՛ղ հոգիէս շարէ շար՝  
Ծիրկաթիւնի հոյլերուն պէս քաւա՛լին.  
Վրաս կախուի Հայկին աղեղն աստղալար,  
Ու փակ աչքերս քու տեսիլփիղ մէջ հալին:

Եթէ իրա՛ւ անմահ են սէ՛րն ու անո՛ւն,  
Եւ մի՛շտ քաջին արեւ կանաչ կը մնայ,  
Իբրեւ ոսկի կանթեղ պիտի շողա՛ս դուն.  
Ու Յոլակիս խրխինջն հոգոյս մէջ զնգա՛յ...

Ստուերին տակ ուռիներուն հերարձակ,  
Ծիծառները գարունի իրենց տաղերն հիւսեցին,  
Զինջ ջուրերու կարկաչին հետ ներդաշնակ:

Դաշտերը ծո՛ւլ դարձան բոցեղ հասկերուն .  
Ու մշակներն անկէ խուրձեր կապեցին՝  
Կարմիր այգէն մինչեւ ոսկի իրիկուն :

Անուշ բոյրը՝ արինաժոր նուռերուն,  
Ու գինեքոր ողկոյզներուն հեշտագին,  
Հովն աշունին քափեց վրայ տուներուն :

Քաղփին վրայ եւ դաշտին մէջ լռամած՝  
Զինը տեղաց շուշանի բիւր քերքերով .  
Ու հորին շուրջ դարձաւ պատանփն անքափանց :

Եւ Զին վիշտի իր ցաւագար պատարագ,  
Արեւագեղ իր պատկերին այրումով,  
Կը բոլորէր եղանակէ եղանա՛կ . . . :





Մեծ իշխանի պալատին մէջ կոչունք մը կար  
Պատուին համար ասպետական Մեհունդակին,  
Որ Անիէն գանձ ու փառքով ետ կը դառնար:

Այնտե՛ղ էին ընտրեալները ասպետներուն,  
Եւ սեպուհներն Ջերմաճոբին ու Շիրուանին,  
Պերն տիկիներն՝ ազնուական մեծ տուններուն,  
Ու կարապի պէս ճիւղաքոյր տոհմիկ կոյսեր:

Երեք անգամ հպարտ փակատն պագնելէ ետք,  
Մեհունդակին բարի գալուստ մաղթեց իշխան.  
Իսկ ան՝ շոայլ ծափերուն մէջ եւ վարդերուն՝  
Ներկաներուն ելաւ ողջոյնն իր հաղորդել.

—Ձե՛զ ամենուդ ողջո՛յն ունիմ Մեծ Արքայէն,  
Եւ Արծրունեաց աշխարհաշէն քագաւորէն.  
Ողջո՛յն՝ Հայոց Լուսաւորչի սուրբ արքունէն,  
Աղքամարի աստուածընտիր Հայրապետէն:

Փա՛ռք հայ ազգին, քէ՛ Անիի առիւծն անպարտ,  
Ու քէ՛ հօօր արծուեդրօշն Մեծն Արծրունեաց,  
Գոռ յաղքուրեան փոքորիկէն աստեղածուփ,  
Թշնամիի բերդերուն վրայ են բարձրացած:  
Ու Խա՛չն Հայոց՝ կարմիր Մահիկն է խափանած:

Անիի մէջ՝ Բագրատունեաց գթոտ տիկին,  
Լուսաւորչի անմեռ փառքին ի յիշատակ,  
Կանգնել կուտայ տանար մը սուրբ եւ գեղակերտ.  
Ես խոստացայ Մոկաց տունէն պարգեւ մը քանկ:

Բանակ մըն ալ ես խոստացայ մեր ֆաջերէն,  
Վստահ, որ յաղթ կորիւնները մեր լեռներուն՝  
Մոկաց անուն յաղթանակով պիտի գրեն,  
Եւ արիւնով մեր դարաւոր ոսոխներուն:

Արքան խնդրեց, որ առաջնորդ մեր ֆաջերուն՝  
Իշխանն ընտրէ իմ մտերիմ Արտակ ասպետն,  
Որուն անուն երկրէ երկիր վէպով կ'երգեն:

Բա՛յց, ո՞ւր է ան, ասպետներուն մէջ չեմ տեսներ,  
Ըսէ՛, Գոհա՛րս, ինչո՞ւ այդպէս տժգունեցա՛ր.  
Ո՞ւր է քոյրըդ, ո՞ւր է ասպետն իմ սիրական...

—Բախտախնդիր ընկերդ զնդանն իմ ես դրեր՝  
Անոր յանդուգն եւ անպատկառ սէրին համար,  
Հո՛ն, մութին մէջ իր հէգ ծնունդը քաղելու.  
Նարտի ոյժովն ա՛ն իմ հլու գերին ըրի:  
Անոր մա՛հին՝ սա՛ իմ բաժակս, կանչեց իշխան:

—Ի՛նչ, Տարօնի արքայորդի՛ն ես զնդաներ,  
Ա՛ն, որ ծպտուած եկաւ տունըդ փառքով օծել.  
Ա՛ն, որուն փառքն երկրէ երկիր է պանծացեր.  
Գո՛ւն՝ խարկանքով այդ մեծ դիւցազն ես զնդանե՛ր..  
Անմի՛տ, այդ ինչ սե՛ւ ես բերեր Մոկաց տունին...

Ասպետներու դէմքերուն վրայ ժպիտ մեռաւ.  
Ու կոյսերը, մեղրամոմի պէս դալկահար,

Բաժակներնին մէկ-մէկու դէմ խորտակեցին:  
Քառասուն կիրք մատուակներ յուզմունքներէն՝  
Թանկ փարչերը սարսափահար գետին գարկին,  
Եւ մարմարներն հին գինիով ողողեցին:

Եւ իշխանը, մուրտի պսակն իրեն նակտին՝  
Հոծ գայրոյքէն՝ ոտքերուն տակ տրորելով,  
Խաչքարի մը պէս գունատած ու մահադէս՝  
Սարսափահար այդ բազմութեան այսպէս պոռաց.

—Արժայորդին, որ խրատով նենգ Բակուրին,  
Ես յիմարըս՝ ցամբած հորին մէջ նետեցի,  
Կենդանի է, այս առաւօտ ստուգեցի:

Ա՛րդ, հարսնիքի օրը պիտի ընեմ այսօ՛ր,  
Պողոտաներն ու գաւիթներն՝ ֆափուր վարդով,  
Ու սրահներն՝ նունուփարով պիտի ծաղկին:

Եօքը հարիւր գառներ պիտի խորովել տամ,  
Գետերու պէս պիտի հոսի՛ նռան գինին,  
Երգ ու ծիծաղ՝ ծովերուն պէս պիտի ծփա՛ն.  
Քառասուն կոյսեր՝ գեփիւռին պէս պիտի պարեն,  
Քառասուն ասպետ ալ քրապար պիտի դառնան:

Ըսէ՛ք, քո՛ղ ներս բերեն հինան լականներով,  
Մուշկ ու վարդիւղ՝ գոհարակուտ սրուակներով.

Այսօր, անխառն փառ՛ ու գինի կ'ուզեմ ըմպել...  
Նե՛րս կանչեցէ՛ք նոխն ու աղֆատ, մանուկ ու ծեք,  
Զի՛ հարսնիքն է ֆաջ վրէնին ու հեզ Զինի՛ն...  
Ու շնչասպառ՝ անբախտ Զինին դղեակ գնաց:

—Քու անհնար տառապանքդ, ո՛վ իմ քոյր,  
Տգիտօրէ՛ն ե՛ս՝ եղբայրըդ նիւթեցի,  
Իմ կեանքէս ներս ձեռքովս փորած վերքին պէս,  
Ներէ՛ ինծի, քու անսահման բարութեամբդ:

Հերի՛ք, որքան դուրս լացիր.  
Ելի՛ր, իրանդ օժէ մուշկ ու ամբարով,  
Հասակդ քաղէ՛ հարսնագգեստիդ մէջ սնդուս,  
Ինչպէ՛ս լուսնակ ձիւն ամպին մէջ կը քաղուի:

Եւ լանջդ ամբիծ ու յորդ մագերըդ սեւ-սաք՝  
Յակիկնքներու, փերուզի եւ սուտակի՝  
Մարգարտայեռ քանկ պսակովը գուգէ.  
Ականջներէդ՝ անգին գինդերըդ կախէ՛.

Եւ մանեակըդ կաքնաքոյր՝  
Հնդկաստանի ջինջ ծովերու մարգրիտէն՝  
Թո՛ղ կարապի պարանոցիդ շուրջ ծփա՛յ:

Ապարանջան քու ոսկեքել ու նրբին՝  
Թո՛ղ բագուկիդ ներմակութեան մէջ շիկնի.

Եւ հրեղէն մատներուդ՝  
Զմբուխտ մատնին ու ադամանդը շողան.  
Օ՛րն է սիրտիդ հարսնիքին:

Փութա՛ վրէնիդ ագատութիւն շնորհել,  
Որ կամովին գերին ըլլաս իր սէրին.  
Փաղափշօրէն ըսաւ իշխանը Զինին:

\* \* \*



Քառսուն մատղաշ նաժիշտներու հետ աղուոր՝  
Զին դուրս ելաւ ապարանքէն հարսի պէս,  
Ինչպէս արեւն՝ արշալոյսի գգուանքէն:

Երկս՛ր պարան մը իր սէրին պէս ամուր,  
Մուրք հորն ի վար երկարեց.  
Ու փիւնիկի մը ճայնովը պաղատեց.

— Բանտուած հոգեա՛կս, պարանն ահա, որմէ վե՛ր  
Կեանքդ քո՛ղ հոսի լոյսին տակ,  
Ու սիրտիս մէջ տառապած:—

Ստուեր մըն էր, որ երեքաց լոյսին մէջ,  
Վրէնը չէր ա՛ն, այլ նոյն ինքն իր ուրուական.  
Մագերն՝ անխնամ ուսերն ի վար քափքփած,  
Դեմքը՝ տժգո՛յն՝ վերջալոյսի մը նման,  
Աղուոր աչքերն՝ մէկ մէկ անդունդ մքամած...

— Այս աչքերըս քաղցր տեսնէդ որբացած,  
Անգամ մըն ալ քե՛զ կը տեսնեն, ո՛վ իմ Զին,  
Ու ա՛լ պատկերդ՝ անեղծ իրենց մէջ գրկած,  
Վերջալոյսի մը պէս պիտի նուաղին.  
Ու մահիս մէջ ինձի պիտի ժպտիս դո՛ւն,  
Իմ մահն անգամ երանութիւն մ՛ընծայած...:

Ըսաւ, ու դեռ համբոյր մը իսկ չը քաղած  
Իր սիրածի մեղրածորան շուրքերէն,  
Զինին վիզին վրայ ինկաւ անկեանդան,  
Մայրիին պէս, որ փոքորկին քափին տակ  
Կը տապալի հովիտն ի վար կուսական.  
Կամ Մասիսի արծիւին պէս վեհափառ,

Որ մահին գիրկն իսկ վեհօրէն կը նետուի.  
Այնպէ՛ս մեռաւ սիրող վրէն տաբաբախտ... :

Զին սառ գլուխն անոր իր գիրկը առաւ.  
Ու նուազուն աչքերն անոր սիրական՝  
Հուսկ համբոյրի մը ֆերթուածովը կնկեց:  
Եւ իր մագերն՝ անվերջ սուգի մը նման՝  
Անոր դէմքին վրայ ք-ափեց դէզ առ դէզ.  
Մինչեւ ինքն ալ անոր մեռոտ շուրթերէն  
Հաղորդուեցաւ մահին խաւար գինիով:

Ու նակտին վրայ, ո՛ւր հարսնութեան վարդը կար,  
Մահն՝ ահաւոր իր համբոյրը դրոշմեց... :



Մեհունդակի դե՛ռ նոր շինուած դղեակի վրան  
Սուգի խաւար մը քանձրացաւ՝ գիշերին հետ.  
Վիշտը նստաւ բարձերուն վրայ ֆունի փոխան.  
Ա՛յ սեւ գիշե՛ր, յիշատակըդ կորսուէ՛ր անհետ...

Հեռու քաղէն՝ գոյգ մը դաժան եւ ծեր կիներ՝  
Մումին լոյսով՝ մէկ մէկ պատա՛նֆ կը կարէին.  
Ու քաֆուն լաց մը կոպերնուն տակը կ'այրէր՝  
Մինչ սեւ ողբով՝ ներմակ պատա՛նֆ կը կարէին...

Եօթը նաժիշտ՝ սեւ մագերով ու սեւ հագած՝  
Ջրուշաններ ու ֆափուր վարդ կը ֆաղէին,  
Իբր մահաճօն այն վաղամեռ սիրողներուն,  
Որ չը բացուած վարդերուն պէս ֆաղուե՛ր էին...

Եւ կուսա՛ն մը, որ աւագն էր նաժիշտներուն,  
Հեղեղի պէս վա՛ր քափելով իր արցունքներ,  
Դաշն եղերգ մը կը հեծկլտար տակն աստղերուն,  
Որ մութին ծոց վերքերու պէս էին բացուեր...

— Բերէ՛՛ք գոյգ մը խնկամաններ գո՛ւտ ոսկիէն,  
Արեւին պէս եւ բոցերուն նման դեղին,  
Եւ գոյգ մ'արծաթ բուրվառ՝ լուսնի պէս դալկադէմ.  
Ու տուփերով խունկ երջանիկ Արաբիային:

Եւ տասը մով՝ կորդուաց սարի ճագոց մեղրէն,  
Որ դիցական ոսկեծաղկէն փաղուած ըլլայ.  
Ու տասը մով՝ մեր գառներու յոյր դմակէն,  
Որուն նարպը ձիւնծաղիկէն ծորած ըլլա՛յ...

Ու տասը կո՛յս՝ հասկերուն պէս՝ խարտեաշ մագով,  
Որ ամէն մէկ՝ սրինգի մը երգին հետ լա՛յ.  
Ու տասն ա՛ղջիկ կէսգիշերի պէս քուլս մագով,  
Որ բուռ առ բուռ ծաղիկ սփռեն նաշերուն վրա՛յ:

Եւ գուսա՛ն մը, որուն ֆնար լոկ ողբ գիտնայ,  
Որ երբ եղերգ մը ան ոչայ լարէ ի լար՝  
Խունկը սուգի պէս կոյսերուն շուրջ քանձրանայ.  
Ու մոմերն ալ յոյսերուն պէս հատնին աննա՛ր...

Ա՛հ, փունջ մը վա՛րդ, փունջ մը նարգիս բերէ՛ք,  
ֆոյրե՛ր,  
Ու քափեցէ՛ք մեռելներու նակտին վրայ.  
Մահին մէ՛ջն իսկ այնքա՛ն ազուր են սիրողներ,  
Որ շուրթերուն սէր՝ կոպերուն ալ երա՛գ կայ...

\* \* \*

Բարուարն ամբողջ՝ սո՛ւգ էր հագեր այն առաւօտ,  
Պողոտային երկու կողմէն մինչ դամբարան՝  
Յուդարկաւոր բազմութիւնն էր անծայրացեր.  
Թի՛ւ կար երկնի վառ աստղերուն, անոնց՝ չկա՛ր...

Մեծ փողոցի երկու կողմէն յորդ աղբիւրներ,  
Գրկած տրտում պատկեր լացող ուռիներուն,  
Մերք ալ իրենց սուգն արեւի ցոլֆով օծուն,  
Լացի մը պէս փաղափէն դո՛ւրս կը հոսէին...

Ու կապարէ ծանր ֆայլերով քափո՛ր կ'անցնէր.  
Նա՛խ՝ կիրք խումբ մը գինուորներու՝ ամէնքն հետի՝  
Նիգակներնին հակած՝ տրտո՛ւմ կը ֆալէին.  
Ու խումբ մ'ասպետ՝ նժոյգներնին սելով ծածկած՝  
Մրրկավար՝ սել ամպին պէս լո՛ւռ կ'անցնէին:

Ապա ֆառսուն տոհմիկ կոյսեր՝ սելեր հագած՝  
կուրծֆերնուն վրայ մէկ մէկ պսակ կը տանէին.  
Եւ ոսկեհուռ զգեստներով խումբ մը կղեր,  
Ականակուռ չաքալ քագերն արելին տակ՝  
Ատղերուն պէս՝ սելուքեան դէմ շողացնելն,  
Մատեաններէն տաղ ու աղօթ՝ կը ֆաղէին:

Ու եօթը ֆաջ մտերիմներն անբախտ վլէնին,  
Եւ Մեհունդակ, հսկայ սուգին տակն ընկնուած,  
Սիրողներուն գոյգ մը նաշեր կը կրէին,  
Որ շուշանի ամպերու մէջ էին քաղուած...

Եւ վրէնի սիրական ձին վրնջալէն,  
Սել քամբին վրայ կրելով գէնֆերն իրեն տիրոջ,  
Հանդարտ գնացֆով մը՝ նաշերուն կը հետելէր:

Ու բագմուքիւնն՝ ի տես լալկան այս քափորին՝  
Մէկ մարդու պէս՝ հեկեկալով կը մրմնջէր.  
«Ա՛յ, չարկամին օ՛րն ու ա՛րել սելնան յաւէտ...»:

Եւ քափորը սել ալիֆին պէս կանգ առաւ  
Նոնիներու ներքեւ բացուած փոսի մը շուրջ,  
Որուն ֆովէն՝ ջինջ առուակ մը կը գլորէր  
Լացի մը պէս իր անարուեստ երգն անվախնան:

\* \* \*

Քառասուն զինուոր՝ վահանակիր ու տէգերով,  
Անբախտ Բակուրն փարշ ածելով դիի մը պէս,  
Յամբ փայլերով առաջացան դէպ մահաբեմ,  
Որ կը կենար նոր դամբանին այնքա՛ն մօտիկ:

Յաղթ դահին մը՝ սուր տապար մը աջ ձեռքին մէջ,  
Կեցած էր մօտ գլխատումի կարմիր կոնին:  
Ու մունետիկ մը բարձրաձայն կը հռչակէր.

—Ո՛վ ժողովուրդ, իշխանի կ'ամբն է կը խօսիմ.  
Մեծերուն սիրտ՝ յստակ ակին է նմանակ,  
Ու լուսնի տակ արծաթի պէս քաւալի.  
Բա՛յց քէ բուռ մ'աղտ դնես անոր ջուրերուն տակ,  
Կը պղտորի ակն ու ջուրը կ'ըլլայ լեղի...

Ասկէ յետոյ ո՛վ որ փորձէ՝ նենգ խորհուրդով  
Իշխանի կամբն ուղիղ նամբէն մոլորեցնել,  
Ա՛ն իր մեղքը պիտի փաւէ միա՛յն մահով.  
Թո՛ղ օրինակ ըլլա՛յ ձեզի չարկամ Բակուր.—»:

Երկու զինուոր գայն մահաբեմ բարձրացուցին.  
Ու սարսափէն ծունգի եկաւ դահինին դէմ,  
Եւ իր անբախտ գլուխ դրաւ կոնին վրայ:

Մինչդեռ հողին կը յանձնէին վրէն ու Զին,  
Դահնին տապարն՝ խօլ որոտման նման՝ իջաւ  
Եւ անջատեց իր մարմինէն գլուխն անարգ,  
Որ տարաբախտ սիրողներու մա՛հն էր նիւթեր:

Բայց կաթիլ մը իր արիւնէն՝ ժահրի նման՝  
Վրէն ու Զինի միջեւ ինկած էր աննշմար,  
Ու մահին մէջն իսկ փո՛ւշն եղաւ անոնց սիրտին:

Եւ քափորն իր լացը քափած ամպի մը պէս՝  
Խո՛ւլ ողբով մը՝ տունի նամբան բռնեց կրկին.  
Ու ասպետ մը Վրէնը լալէն աչքեր կարմրած՝  
Որոտման պէս այդ բազմութեան ա՛յսպէս գոռաց.  
—Վրէնի սիրո՛ւն, քո՛ղ ամէն մարդ, անէ՛ծ քի տեղ,  
Քար մը նետէ այդ չարկամի դիին վրայ...»

Ու պահ մը ետք՝ պսակագարդ շիրմին մօտիկ՝  
Մեծ քարակոյտ մ'էր տնկուեր նախանձի պէս...







## ՎԵՐՋԱԲԱՆ

Շիրմին վրայ՝ եղերական վրէն ու Ջինին՝  
Զոյգ մը դալար նուռի *ալուկ*\* են ընծիւղեր.  
Որ դարէ դար՝ արեւին տակ եւ լուռ լուսնին՝  
Թա՛րմ ու մատղաշ միշտ կը բանան իրենց նիւղեր:

Եւ ամենուն օտար՝ երկու որբերու պէս,  
Որ լոկ գիրար գիտեն, գրկանք ու յիշատակ,  
Անոնք քագուն վիշտ մը կուլան լացով մ'անտես.  
Ու հին վէպ մը կը փսփսան աստղերուն տակ:

Յոյսերուն պէս՝ անոնց ոստերն ալ կը փքթին.  
Ու կը գուգուին բիւր մշկահոտ ծաղիկներով,  
Այրի սոխակ մը՝ օրէ օր՝ իր մեղեդին  
Կ'երգէ անոնց բոյրով օծուն շուքերուն հով:

Եւ երկու գոյգ բագուկներու պէս սիրահար՝  
Անուշաբոյր ոստերն մատղաշ նուռիներուն  
Վառ կարօտով կուգան պահ մը գրկել գիրար,  
Եւ համբուրուիլ բերնովն իրենց ծաղիկներուն:

Բայց փշենի մը՝ քունաւոր նախանձի պէս՝  
Կը տնկուի միջեւ անոնց լուռ գրկանքին.  
Եւ անջատուած՝ անոնք՝ սիրող շուրքերու պէս՝  
Մեղմ սիւքերուն դէմ կը դողան ողորմագին:

---

\*Ալուկ - ծառին սղտիկը

Ազապ լաներն լուսնի լոյսով դաշտէն դարձին՝  
Փուշն արմատէն կը կտրեն սո՛ւր սո՛ւր տապարով.  
Ու աղբիւրէն դարձին կոյսերն՝ լուսաբացին՝  
Զուր կը սրսկեն նուռերուն տակ նոր կուժերով :

Անոնց տենդոտ փարուսին մէջ՝ փուշը նորէն  
ժահրոտ վէրքին պէս կը մեծնայ սպառնագին.  
Ու կսկիծէն տերեւաքա՛փ ու տրտմօրէն՝  
Զոյգ պլուկներն մէկգմէկէ կը բաժնուին...

—«Ո՛վ եօքն անգամ կտրէ չար փուշն՝ եօքը տարի,  
Պիտի հասնի ան իր սէրին ու փափաքին...»  
Կ'ըսեն ազապ լաներն՝ չհնաղ մեր Բարուարի,  
Ու արմատէն կը կտրեն նենգ փուշը կրկին :

Եւ մեհաւոր երկու դալար նոնենիներ  
Սարսաղին իրարու գիրկ կ'իյնան նորէն.  
Ու ոստն ոստին կը մնջէ իր տանջանքն ու սէր,  
Եւ քերքերը կը տժգունին համբոյրներէն...


Բայց չեն գուգուիր հիր նուռերով այդ գոյգ ծառեր.  
Արեւին տակ հպա՛րտ չ'անիր իրենց հասակ.  
Զի պտուկներն դեռ չի բացուած վա՛ր են քափեր.  
Ու մաշե՛ր է գանոնք կարօ՛տն ու յիշատա՛կ...

Ամէն գիշեր անոնց շուփին տակ սիրահար,  
Զոյգ մ'ոգիներ՝ քաղցր ու տրտում ինչպէս լուսին՝  
Երկու բոցի պէս կը գրկուին, կ'այրեն զիրար.  
Ու կը մա՛րին վառ կարօտէն գերդ վրէն ու Զին...

Յունվ. 2, 1919

ՀՐԵՂԷՆ ՉԻՆ





## Հ Ր Ե Ղ Է Ն Ձ Ի Ն

Արչակի ծովակին հանդարտ ավերուն վրայ, ամէն առաւօտ, արեւածագին՝ տարօրինակ յուզում մը կ'իյնայ :

Եղէգներու մէջէն, որոնք ջրանոյշներու քնքնութիւնով հասակ են քաշեր, խորհրդամով փսփսուք մը կը լսուի : Վայրի բաղերը՝ անօրինակ սարսուռով մը քեւերնին կը բաղլսեն . ու իրենց քոնիչֆի անհունութեանը մէջ կ'անհետին այլեւս : Արօրներուն սեւաւոր սիրտը, բոպէ մը գէթ, գուարթ միջով մը կուռի . ու արծաթէ ալիքները երանօրէն կը մեռնին ոսկեփարէ ավերուն վրայ . . . :

Հողէ կարմիր սափորները ուսերնուն՝ ամչկոտ հարսները, իրենց անուշ երազներէն դեռ գինով, տարփանոյշ աչուրներով՝ հեռո՛ւն ծովակին կը նային, որ արեւի անդրանիկ շողերուն իր լանջը կը բանայ վնիտ՝ բալի շղարշի մը տակէն լուսաթաթախ : Եւ ահա՛ կայտառ խրխինջ մը կուգայ արեւէն՝ հօօր ու յստակ . ու ծովակէն առոյգ հողփիւն մը կը բարձ-

բանայ, այնչա՛փ արագ, որպէս թէ կայծակը շինած  
ըլլար գայն:

Եւ ադուոր հարսները, սափորնին գետին դրած,  
տակէն մատղաշ ուռիներուն, որոնք գիւղի աղբիւրին  
երկու ասերն են փքքեր, իրարու կը մօտենան եւ ե-  
րանական փսփսուֆով մը իրարու ականջն ի վար կը  
մըմնջեն. —

«Հրեղէ՛նն ձին, հրեղէ՛նն ձին է, որ արեւէն ծովակին  
կուգայ...»

Ծովակի մենաւոր մէկ ասին, ագռաւի մը թելերէն  
աւելի՛ սել՝ իր մագերուն փարքամ անտառը հովե-  
րուն տուած, գեղջուկ աղջիկ մը անուշ՝ հետեւեալ  
վէպը երգեց ինծի այնչա՛փ տրտմագին ու պարգո՛ւկ:

\* \* \*

—Վայրի խուժան մը՝ հեռաւոր արեւելքի տափաս-  
տանէ մը փրքած՝ անքի՛ւ՝ ինչպէս պատուհասող  
մարախներու բազմութիւնը չարաշուֆ, եւ անօթի  
գայլերու ոհմակի մը պէս՝ վայրա՛գ՝ կանաչագեղ  
մեր դաշտերն ու մեր սարերը արիւնով ողողեց՝ հե-  
ղեղին պէս անկապուտ, որ արեւոտ լեռի մը ստա-  
րոտէն անակնկալ կը բղխի...:

Անոնց հուժկու ձիերու սմբակներուն տակ անա-  
պատը ֆալեց: Անոնց ետին՝ դիակներ եւ բոլորը՝  
գլխարուրգեր բարձրացան, որոնց վրայ ցօղը իջաւ  
լացին պէս...:

Հայ գիւղերուն մէջ շէնշող, ո՛ւր, դեռ երէ՛կ, աշ-  
խատանֆովը հպարտ շինականին բարի պայֆարը

կ'ենար, ու ֆաղփին մէջ երջանիկ, ուր ֆաղփենի գե-  
նուն կեանքը կը պոռթկա՛ր, գերեզմանո՛ցը լայն-  
ցա՛ւ, այնպէս տխուր, որ կարծես հո՛ն դարերով մը-  
նայլ մահն էր բնական . . .

Այս անխնայ աւերին եւ մահին դէմ անարդար՝ ան-  
վախօրէն դո՛ւրս ելան կորիւնները Արծրունի, ֆա-  
ջերն Մոկաց սարերէն, Ջերմաձորէն, Ռշտունիքէն  
արգաւանդ. եւ Արչակի դաշտին մէջ՝ խուժանին ո-  
ղողումին դէմ վայրագ՝ երկաթակուռ բումբի մը  
պէս կանգնեցա՛ն:

Անապատի այդ հեղեղը բարբարոս՝ Հայկեան  
պողպատ պարիսպին դէմ՝ փշրուեցաւ փերթ առ  
փերթ, ամէ՛ն անգամ անկէ մաս մը ֆանդելով. եւ  
անողորմ հեղեղին սկի՛զբ չկար, վե՛րջ չկա՛ր . . .

Մեր կտրիւնները անվախ, կուրծփերնուն վրայ բաց-  
ուած վէրֆով կարմրուն, ջարդուած սուրեր դե՛ն ձեռ-  
փերնուն մէջ՝ ամո՛ւր, հայորդիի իրենց ազուրը աչ-  
փերն ընդ միշտ փակեցին. եւ փառքի մահ մը բոլոր  
նակատներուն վրայ՝ անեղծ պսակ դրաւ հերոսի . . .

Բայց առաջնորդն անոնց ֆաջ՝ եօթը անգուր- հար-  
ուածներէն վիրաւոր-մատղաշ մարմնին վրայ բաց-  
ուած եօթը վարդ-հրաշֆով մը ապաֆէն՝ իր գեղաբաշ  
նժոյգին վրայ կը կենար՝ պայծա՛ն ինչպէս արշա-  
լոյս, եւ ահարկու՝ եթովպիական առիւծին պէս վի-  
րաւոր:

Կատղած խուժանը անոր դէմ կը գոռար՝ ինչպէս  
ծովը՝ փարոսին դէմ լուսարձակ: -Ո՛վ որ իշխանը

առողջ ինձի բերէ, իմ ֆաջե՛ր, գեղեցկագոյն հայու-  
հին անո՛ր վարձֆն է անկասկած ... խուժապետին  
ձա՛յնն էր ան...

Տասը հազար ձիերու խորխտ տոփիւնը հնչեց. քա-  
թառի մը պէս հզօր՝ փոքորկեցան հազար ձիեր բարձ-  
րավիզ:

Իշխան գիտէր, որ իր կապարնն էր դատարկ, եւ  
վիրաւոր մէկ կողմ ի վար կը կախուէր՝ իր արիւնով  
ներկուած: Նիգակն արդէն խորտակուած էր ձեռքին  
մէջ, հազա՛ր կեանքեր խորտակելով իրեն հետ: Սո՛ւ-  
րըն ալ հզօր բաղխումին մէջ կոտրած էր, իր յաղթա-  
կան ձեռքին մէջ՝ սիրտի մը պէս՝ փշրուած... Ուս-  
տի իրեն կը մնար ձիու վագֆին իր կեանքը վստահիլ.  
ու ձին, ըսես, մոլորած կայծակին պէս կը թռէ՛ր...

Նայէ՛ ծայրը սա նամբուն, որ վիրաւոր օձի մը պէս  
աեագին՝ իր օղակը ոսկեման տա՛ դիմացի բարտինե-  
րուն շուֆին տակը կը ֆակէ. հո՛ն ծովն ափունֆն է  
գրկեր իր անուրջի թեւերով. հո՛ն կանգ առաւ հրա-  
շունչ երիվարը իշխանին՝ ոնգունֆներէն հոսելով  
փոքորիկը արիւնածոր իր լանջին:

Այդ օր կապոյտը ծովին՝ աւելի ֆաղցր էր ֆան փե-  
րուզն պատուական, որ Շիրազի վարդագարդ «բա-  
գար»ներէն կը ժպտի: Արօրին երգը տրտում՝ մեղրի  
նման՝ ջուրերուն վրայ կը ծորար՝ հրաւէրին պէս ա-  
նուշ, որ լուսնկայ գիշերով՝ սիրող աղջիկն իր սիրա-  
ծին կը մնջէ...



Ծովը երգեց, ծով ժպտեցաւ եւ ծովն իրեն կանչեց իշխան յաղթական:

Ան բռայէ մը իր ինկած գինակիցները յիշեց, փառքի ժպիտ մը բարի դէմքն իր ծածկեց: Ապա բաներ մը մնջեց, աղօթքին պէս երկիւղած եւ օրհներգի մը պէս հանդարտ ու վսեմ. ու ձիուն հետ ջուրերուն կախարդ գիրկը նետուեցաւ. . . .:

\* \* \*

Անկէ ի վեր, ամէ՛ն օր, երբոր ցայգը ծովակին վըրայ կը բացուի, կ'ըսեն՝ խրխինջ մը կը հոսի արեւէն. ու ներմակ ձի մը՝ լոյսերուն պէս մաքուր, է՛ն առաջին շողերուն հետ ծովակին ծոցը կիջնէ: Զօրավարի ձի՛ն է ան, արեւաբա՛շ, հրեղէն. . . Անդունդին վրայ, որ ծովին վնիտ լանջն է յօրիներ, պալատ մը կայ բոցեղէն. ու դիւքական կանթեղի մէ պէս ոսկի՛ միջոցին մէջ կը կախուի՝ առանց թելի՛ ալ միայն հըզօր կամֆովն վահագնին:

Դուռերուն վրայ սատափէ՛ հազար գուսան կը նըստին՝ բանդոնին վրայ գգուելով վէպը կորած մեր փառքերուն բիրաւոր, եւ արիւնոտ մարտերուն ռազմերգները մեծագոռ մեհենաշունչ հօր լեզուովն հեքանոս:

Գաւիթներէն ծաղկաշատ՝ դարբիններու կռանին գոռը կուգայ թէ՛ լոյսին հետ, թէ՛ գիշեր: Ու անկապուտ երիվարին տոփիւնէն՝ ալիքները կը լեռնանան փրփրազարդ՝ ու ժայռերուն երեսն ի վար կ'զգայոեն

երգ մը անլուր եւ վայրի, որ սիրտերուն մէջ բուրձ  
դեռ չ'գգացուած սարսուռ մը կը ներարկէ:

Ա՛յս է, կըսեն, իշխանին բնակարանը կախարդ. .  
Ամէ՛ն գիշեր, երբ Հայկը ջուրերուն վրայ իր աղեղը  
կը գծէ, ա՛ն հրեղէն ձին հեծած Մհերին դուռը կեր-  
թայ: Ո՛ր ի՛նչ անուշ է, կըսեն, ձիուն խրխիւնջը՝ լու-  
սընկայ գիշերով՝ երբ աստղերէն կը հոսի:


Բարի հսկան՝ կախարդական իր դուռը լա՛յն կը  
բանայ. եւ իշխանի նակտին վրայ իր տիտանի ջերմ  
համբոյրը կը դնէ: Ու հո՛ն անոնք երկա՛ր ատեն կը  
խօսին, ի՞նչ բանի շուրջ-ն՛չ ոք կըրցած է գիտնալ:

Ու երբ լուսաստղը՝ Աստղկան մեծ բերդէն՝ արծա-  
թածամ կը ծագի Վանի բերդին ու նիրհող ծովին վը-  
րայ փերուզէ, իշխան, նորէն, ընդծովեայ իր պա-  
լատը կը դառնա՛յ:

Եւ հոն անդո՛ւլ կ'որոտայ գոռ գնգոցը դարբիննե-  
րու կռանին. . . :

\* \* \*

Երբոր, նորէն, հպարտ լաները մեծ տունին Արծ-  
բունեաց ու կորովի գեղջուկները Ռշտունի, անընկ-  
նելի սարորդիները հսկայ՝ Զերմածորի եւ Կարկառի  
ու Մոկաց ձիւնապսակ լեռներուն, մեզ վեցը դար գե-  
րեվարող խուժին դէմ՝ մէկ մարդու պէս խիզախօ-  
րէն ծառանան՝ անդրդուելի արդարութեամբ զրահ-  
ուած, եւ երբ վրէժի երգերու գոռ կանչին հետ վրի-  
ժամարտը պայթի, պիտի բացուին այն ատեն դու-  
ռերն ամուր ապարանքին դիւթական: Եւ իշխանը հե-



ծած իր ձին հրեղեն՝ աղուո՛ր՝ ինչպէս արեւն որ նոր կը ծագի, եւ անողորմ՝ ինչպէս մահը անխափան՝ պիտի իր *ԹՈՒՐԸ ԿԱՅԾԱԿԻ* մերկացնէ:

*Մահիկն* պիտի խոնարհի եւ պայտն ըլլայ անոր սէգ, ոսկեսմբակ նժոյգին, եւ աստղը՝ գա՛մ աղամանդ. . .

Ու Անիի նորակերտ միջնաբերդէն պիտի կրկին ան կախէ արծուենշան դրօշը՝ ազա՛տ ու մեծ հայութեան:

Իրան պիտի, այն ատեն, անոր զոհէ պարտուած *առիւծն* իր հլու, հայկեան փառքին գերագոյն. . . :

---

1) *Թուր-կայծակի-հայ քաջերու կախարդական սուրը սերունդէ սերունդ կտակուած:*





Մ Ն Ե Ր





## Մ Ն Ե Ր

Մարտնչող ու Յաղթական Հայութեան

Մհե՛ր, ո՛վ յաղթ դու տիտա՛ն,  
Որուն վրէժի կարմիր արշաւն անխափան՝  
Աւանդութիւնն փակեց կրանիք իր դուռով,  
Եւ նժոյգիդ վըրընջիւնը աստղաթով՝  
Խառնեց Գայլի անդնդալուր նուագին,  
Որուն կախարդ արհիւն վրայ մթագին՝  
Ձիդ կը գիրնայ ադամանդէ վարսակով,  
Լսէ, երգչիս անարժան:

Սեմիդ վըրայ մոգաշէն՝  
Ձիւն տատրակներն սէ՛ր մնջելով մեռե՛ր են.  
Վարդավառն ա՛լ չունի ոսկի խարոյկներ.  
Եւ մըշակը՝ բահն իր ուսին՝ չի մըտներ  
Յանկարծ բացուող բու մեծ դուռէդ ամբակուռ.  
Եւ կոյսերը «վիճակ»ն իրենց ծաղկաբոյր՝  
Սեմիդ վըրայ «աստղատես»ի չե՛ն դըներ.  
Մհե՛ր, կռի՛ւ կայ նորէն...

Հերի՛՛ք որչափ հսկեցիր  
Անել բանտիդ դիւքանքին մէջ մթածիր,

Վրէժը քու մէջդ ա՛լ պարտկելու անկարո՛ղ,  
Երբոր ցեղիդ՝ անմեղ արիւն ցօղ առ ցօղ  
Հեղեղ դարձաւ եւ եկաւ սեմդ ողողել.  
Բայց ա՛լ ո՛չ մէկ աստուած կամ մարդ՝ անարգել  
Պիտի քափէ հայ արիւնը կենսաշող:  
Թամբէ՛ նժոյգդ ամպաթիւն:

Հայերն ա՛լ չե՛ն աղերսեր,  
Ու չե՛ն ողբար իրենց մեռելն ու աւեր:  
Զե՛ն աղօթեր ու չե՛ն սիրեր մարդկօրէն,  
Այլ կը հեւան եւ դիֆերուն պէս կա՛տեն.  
Մէ՛կ սէր մը կայ—եւ արի՛ւնի սէրն է ան,  
Եւ դահիճի քրքիջն ունին լոկ դաժան.  
«Յասման օ՛ր»ն է, բա՛ց յաղթ դուռըդ մոգաշէն  
Եւ կըռուի ե՛լ, ո՛ր Միեր... .

Դոփի՛ւն մը կայ դուռէդ ներս.  
Եւ ադամանդ կայծերն՝ աստղի հոյլին պէս՝  
Անժոյժ ձիւղ սմբակներէն կը լուսնան,  
Տատրակի՛ն տեղ ահա՛ շահէ՛ն մը որսկան՝  
Սեմիդ վըրայ՝ մարտակարօտ կը նըչա՛յ.  
Եւ հոգերուդիս հայ ռազմե՛րզն է որ հիմա  
Կը փոթորկի — հին աղօթփի մը փոխան:  
Զեռֆդ ա՛ն մըտրակդ աստղագէտ:

Հեծի՛ր նժոյգդ հըրեղէն,  
Ու գանգրահեր հպարտ գլուխդ դի՛ր, նորէն,  
Մեծ սաղաւարտն քու դիւցազուն պապերուդ.  
Եւ քո՛ղ շողայ անխոց կողէդ կենեղուտ՝  
«Թուր—կայծակին» Սասնոյ անյաղթ «ծուռերուն».




Պէտք է՛ վահան, ո՛չ իսկ զըրահ պըսպըղուն.  
Զի հայ գունդերն՝ փոքորկին պէս անկապուտ՝  
Մհե՛ր, քեզի կ'սպասեն...


Մարտ 31, 1918, Ֆիլատէլիա

**ԾԱՆՈԹ.** — Դաւիթի զաւակն էր Մհեր, որ դաւաճանօրէն սպանուած իր հօրը վրէժը լուծած ատեն, իր առջեւը բացուող հսկայ դուռ մը կը տեսնէ, եւ հրեղէն ձիուն հետ անկէ ներս կը մտնէ: Դուռը ետեւէն կը փակուի: Ժողովրդական աւանդութիւնը կ'ըսէ թէ՛ այդ օրէն ի վեր, Մհեր ու իր ձին հոն կը կենան: Մհերի այդ դիւթական բանտէն ստորերկրեայ Գայլ զետըր կ'անցնի կատաղի եւ ահադնաձայն: Տարին մէկ անգամ միայն, կ'ըսէ այդ աւանդութիւնը, Մհերի դուռը կը բացուի՝ վարդավառի եւ կամ Համբարձումի զիշերը: Այսպիսի զիշեր մը դուռին մօտիկ աշխատող մշակը զայն բաց դռնելով՝ բահը ուսին ներս կը մտնէ. Մհերը անմիջապէս զայն իր դանձատունը կ'առաջնորդէ եւ կը սպառուիրէ մշակին, որ ուզած չափով դանձերը առնէ, բայց զգոյշ ըլլայ եւ ատենին դուրս ելնէ, որովհետեւ դուռը պիտի գոցուի: Բարի մշակը այս ահագին հարստութեան ի տես, ապշած, կը մոռնայ ինքզինքը՝ եւ դուռը կը գոցուի իր ետեւէն:

Մհեր իր ձին հեծած դուրս պիտի ելնէ պատուհասելու իր ժողովուրդին թշնամիները. այդ օրը «Ցասման Օր»ը պիտի ըլլայ, այսպէս կը հաւատայ վասպուրականցին եւ կ'սպասէ անհամբեր «Ցասման Օր»-ին:



123



## ՑԱՆԿ ՆԻԻԹՈՑ



	Էջ
ՆԱԽԱԲԱՆ .....	9
ՈՍԿԵԽՈՏԸ .....	25
ԱՐԵՒԱՄԱՐՏԸ .....	35
ՎՐԷՆ ՈՒ ՁԻՆ .....	45
ՀՐԵՂԷՆ ՁԻՆ .....	111
Մ ՀԵՐ .....	121





